1897 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 (9 Յունվ.) ԿԻՐԱԿԻ

№. 151—ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 151

1897 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 (9 Յունվ.) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի. կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունւում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“. կամ Tiflis, Rédaction „Ardzagang“.

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնն ընդունւում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՐԶԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԲԱԺՈՒՆԱԾ Է ԲԱՓԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1898 ԹՈՒԻ

ԱՐԶԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՒԵՕԹ ՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Բաժանորդագրութիւնն ընդունւում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆՈՒՄ (Վեյեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

ԲԱԺԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 ՌՈՒԲԼԻ

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „АРЦАГАНКЪ“ իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armenien „Ardzagang“

Յայտարարութիւններ ընդունւում են հայերէն եւ օտար լեզուներով

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“.

(XXI годъ изданія).

Газета ежедневная, литературная, общественная и политическая.

Подписная цѣна. (для городскихъ): 12 мѣс.—5 руб., 6 мѣс.—3 р., 3 мсѣ.—1 р. 75 к., 1 мѣс.—75 к.; (для иногородныхъ): 12 мѣс,—7 руб., 6 мѣс.—3 р. 50 коп., 3 мѣс.—2 р. 1 мѣс.—1 руб.

Подписка принимается исключительно: Тифлисъ, Головинскій просп., № 3.

Объявленія: для Закавказья за мѣсто, занимаемое строкой петита: на первой страницѣ 10 коп., на послѣднихъ—5 коп.; за объявленія внѣ предѣловъ Закавказья на первой страницѣ 16 коп., на послѣднихъ 8 коп. (3—3)

ԹԻՖԼԻԶԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիւրակէ զեկտ. 28-ին կըկայանայ

ՊԱՐԱՀԱՆԳԷՍ

ՅՕԳՈՒՏ

ԹԻՖԼ. ՀԱՅՈՒՀԵՒԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Տոմսակները 2 ռ. 10 կ., ծախուում են Ժողովարանի վէհյարի մօտ։ (2—2)

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

ՎԱՐՁ ԱԶՆ. ԹԱՏՐՈՆՈՒՄ

Շորեքշաբթի, 31-ն զեկտեմբերի 1897

Հայ թատերական ընկերութիւնն ի նպաստ արտիստ ալ. Ա. ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ

Կըներկայացնէ

I

„ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՂՏՆԻՔ“

Կոմեդ. 3 գործ, թարգմ. Յակ. Տէր-Յովհաննիսեանի

II

ՋԱՐԱՒԱՏԵՍԱԿԱՆ ԳԵՐԱՍՏԱՆ

Վօդվիլ 1 գործ. հեղ, Մանսֆէլդի թարգմ. Դ. Տէր-Դաւթեանի։

Մասնակցում է ամբողջ խումբը։

Սկիզբն է ուղիղ ժամը 8-ին և վերջը ժամը 11-ին։

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Մնաբարձիկ Վ. Լ. ՓՕՐԿԱՏԻ

Րէպէրտուար զեկտեմբերի 28-ից մինչև զեկտեմբերի 31-ը։

28-ին զեկտեմբերի կիւրակէ առաւ.—«ՓԻՆՁ ՉԱ ՅԱՐԵՒ» երեկ—«ՆՈՒՐԻ ՅԵՒՆԻՔ»

ՓԵԼԻԵՏՕՆ

ԳՐԱԿԱՆ ՀՐՈՅՑՆԵՐ

Հումօր և ծաղրը։ Ձշմարտութիւն և մարդիկ։ Պ. Մուրացանի «Գողտնիքը բացուեց» պատմածքը։ Հրէշներն օրէնսդիրներ չեն։ Հիւգօ և Քուալմօզօ։ Բացառիկ երեւոյթները օրէնք չեն։ Les tanailles Պօլ-Հերվիէյի և «եզակի բնաւորութիւններ»։ Ճշդութիւն և անհատը։ Գրական օրէնք և պ. Սուվորինեան «Ամուսինները»։ Վատ օրէնքի տեղ լաւը և ոչ օրէնքի ազատազում։ Ճէքսպիր, իւր հերոսները և նրանց հոգեբանութիւնը։ Թէ ինչու կրիտիկան ստիպուած է մանրամասն խօսել։ Պօլտեդիք ու հումօրն ու կատակը։ Սոխական չորեքշաբթիական հումօր չէ։ Պարոնեան—վշտի հանճարը հումօրիստ։ Մտավախութիւն և սոսկութիւն գրականական շրջաններում։ «Կեանքի տեսարաններ» դիրքը։

—

Հումօրը ազատ մտքի ծնունդ է. մտքով սորուկը չէ կարող հումօրիստ լինել։ Նոյն իսկ գաղաւար սորկութիւն քաշած ազգի մէջ կարող է, այո, երեան գալ հումօրիստ, բայց նա կըլինի միայն այդ ժողովրդի կրած ֆիզիքական և հոգեկան տանջանքներից բուսած հանճարը։ Իսկ դրանք հազուագիւտ են և դարէ ի դար են երեում և ոչ թէ տարէ տարի։

Հումօրը ոչ օրի չէ վիրաւորում, որովհետև նրա մէջ բարոյական ոյժ կայ. նա ճշմարտութիւն է. մինչդեռ ծաղրը—որ չխղճում են շատերը հումօրի հետ—վիրաւորում է, որովհետև նրա աղբիւրը շատ անգամ կիրքն է և տգիտութիւնը և ոչ թէ ճշմարտութիւնը։

Դուրսէ մեզ ասեն թէ միթէ ճշմարտութիւնը չէ վիրաւորում մարդկանց. չէ՞ որ շարունակ կրկնւում է թէ «ճշմարտութիւնը աչք է ծակում», թէ ճշմարիտ խօսողի ձին պիտի թամբած լինի» և այլն և այլն։ Ո՛չ, կըպատասխանենք մենք կատարեալ համոզմամբ։ Այդ պատող և ընդհանրացած «ճշմարտութիւնը» կամ սխալ է կամ սխալ է հասկացւում։ Դուրսէ նոյն իսկ ես մի որևէ տեղ, մի անգամ, կամ մի քանի անգամ կրկնած լինեմ այդ խօսքերը, բայց եթէ ոչ ոք կամենայ ընդունել թէ սխալ են հասկացուած այդ խօսքերը, պատրաստ եմ ես այդ սխալն ինձ վերագրել, որովհետև errare humanum est։

Ձշմարտութիւնը լսել ցանկացողին վիրաւորում է նրա արտայայտութեան սխալ, կոպիտ ձևը, իսկ չլսել ցանկացողին իւր ներքին սուրը։ Ուրիշ բան է, երբ բժիշկը իւր մօտ եկող հիւանդին ամենայն կոպտութեամբ, առանց մարդասիրական որևէ զգացման, կարճ ու կտրուկ ասում է—դու թոքախտ ունիս ու կըմեռնիս։ Հիւանդը վիրաւորվում է դրանից. թէև նա դիմել էր բժշկին բուժուելու նպատակով, բայց այդ վիրաւորուելու մէջ վիշտ կայ, իսկ վիշտը ազնիւ ոյժերի զգացումն է. ուրիշ բանէ երբ բժիշկը հիւանդից չէ ծածկում նրա թոքախտ ունենալը, բայց մերձենում է նրան սիրով, մարդասիրութեամբ։ Ձշմարտութիւնն այդտեղ չէ վիրաւորում հիւանդին, թէև նրա էութիւնը մի մաղաչափ չփոխուեց։ Ուրիշ դէպքում հետևել երևոյթին է նպատակում. հիւանդը դիմում է բժշկին, ակամայ, ինստինքաբար, ուղղակի կենսասիրական, ապրելու զգացմունքից դրդուած. նա ինքը շատ լաւ գիտէ իւր հիւանդութիւնը, բայց նա չէ ուզում լսել բժիշկից այդ հիւանդութեան մասին, իսկ լսելուս վիրաւորվում է և շատ անգամ նոյն իսկ ատում է բժշկին։ Ես վերջըի միայն ներկայ օրինակները իմ ընդունած տեսակէտին կօնկրէտ կերպարանք տալու նպատակով. իսկ կեանքի անթիւ երևոյթներից, անթիւ էլ օրինակները կարելի է քերել։ Ձշմարտութեան ազդեցութեան կապը նրա լսողի հոգեկան և ֆիզիքական դրութեան հետ աքանչելի կերպով արտայայտուած է մի փոքրիկ դեղեցիկ գրուածքի մէջ, որ ես կարդացել եմ սրանից 10—15 տարի առաջ, չեմ յիշում հայոց որ թերթում, բայց յիշում եմ որ այդ գրուածի վերնագիրն է «Գաղտնիքը բացուեց» և հեղինակն է մեր երիտասարդ վիպասան պ. Մուրացան։

Այնքան գողարիկ է այդ երկու երեք երեսի վրայ տեղաւորուած փոքրիկ գրուածքը, այնքան ճիշտ հոգեբանութիւն կայ նրա մէջ, որ ես այստեղ չեմ կարող ինձ զսպել, առաջ չբերել նրա կարճ բովանդակութիւնը.—երկու ընկերակիցներ են, կրթուած, ուսումնական մարդիկ, կապուած ընկերական սիրով, գաղափարակիցներ, մրցակիցներ։ Նրանց մէջ գաղտնիք չկան։ Երկու մարմնի մէջ բարախում է մի սիրտ. Մէկը միւսի համար պատրաստ է ամեն մի զոհողութեան.

Ընկերներից մէկը սիրահարուած է մի գեղեցիկ, մատաղահաս ու կրթուած օրիորդի վրայ և քանում է իր սիրտը միւս ընկերին։ Վերջինս ծանր սրտամաշկիկ ցաւ է զգում, տեսնելով իր ընկերոջ սէրը և հաստատ իմանալով որ նա երբէք գոհացումն չի պիտի առանայ։ Ամեն կերպ աշխատում է խաղաղացնել ընկերի սիրտը և տրամադրել նրան հետ կենալ այդ սիրուց, բայց ընկերն անողոք է ու պահանջում է միւս ընկերից ասել թէ ինչու՞ սիրած օրիորդը չէ պատասխանում իր սիրոյն։ Երկար տատանումներից, հոգեկան տանջանքներից յետոյ, ընկերը վերջապէս ստիպուած է լինում ասել—«որովհետև դու սպասող ես»։ Այդ օրուանից սպասողը ատում է իր ընկերին, վիրաւորուած ճշմարտութիւնից։ Եվ որ արդարև գեղեցիկ է այս պատմութիւնը, ճիշտ է հոգեբանօրէն։ Այժմ մտածեցէք, ընթերցող, թէ արդեօք այս դէպքում ճշմարտութիւնն էր վիրաւորողը։ Ինձ թուում է թէ—ոչ. այլ ընկերներից մէկի ֆիզիքական և նրանից հետևած հոգեկան դրութիւնը, որ զուրս է սովորականից, որ հրէշային է. իսկ եթէ մարդու մէջ վիրաւորվում է հրէշը, չէ կարելի ասել թէ մարդն է վիրաւորվում ընդունելով հանդերձ որ այդ հրէշի մէջ իսկ ապրում է մարդ և շատ պատուական մարդ։

ՀԱՅ ՕՐԲԵՐԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Նամակ խմբագրութեան)

Կարդալով հայ լրագիրներում «Հայ որբերը եւ գերմանական բարեգործութիւնը» վերնագրով յօդուածը, ստիպուեցի գրիչը ձեռքս վերցնել և մի քանի ճիշտ տեղեկութիւններ յայտնել, որով գուցէ հայ հասարակութեանը պակասմունք պատճառող յօդուածից ազատել կարողանայի։ Հայ թերթերը իրանց լուրը վերցրել էին, «Frank. Zeit.» լրագրից, իսկ ես իմ տուած լուրս հաղորդում եմ բոլորովին ճիշտ աղբիւրներից, որի համար երաշխաւորում եմ։ Խնդիրը վերաբերում է Բէբէկի որբանոցին և պատասխ Բրոկէսին։ Դիտեցածս սա է։

Կ. Պոլսի վերջին սարսափելի կոտորածներից անմիջապէս յետոյ, Մայն գեամ վրայ գտնուող Ֆրանկֆուրտ քաղաքի գերմանակ.—հայկական կենդրոնական վարչութեան կարգադրութեամբ, Կ. Պոլիս ուղարկուեց կոմսուհի Դրեբէն, հայ որբերին ապաստանելու համար։ Կ. Պոլիս հասնելով նա բնակուեց Սկիւտարում և կարճ միջոցում մի մեծ բնակարան դնեց, Բօսֆորի ափում գտնուող Բէբէկ գիւղում և հայ որբերի համար ապաստարան բացեց։ Հինգ ամիս կառավարեց և ապա յանձնելով Շլեզիացի պաստոր Բրոկէսին, ինքը կրկին վերադարձաւ Գերմանիա։

Ես այժմ հայ որբերի թիւը Բէբէկի որբանոցում մօտաւորապէս 102-ի է հասնում։ Որբանոցի բոլոր ուսուցիչները բողոքական են։ Դաստիարակութիւնը մեծաւ մասամբ գերմաներէն է։ Այդտեղ կրօնագիտութիւնը — բողոքական է։ Աւելորդ համարելով առ այժմ բոլոր պաշտօնակիցների անունները յայտնել, միայն յառաջ եմ բերում կրօն ուսանդող անձնաւորութիւնների անուանացուցակը։ 1) Պաստոր Բրոկէս, 2) օր. Մ. Լիւդիկէ (գերմանուհի), 3) օր. Ռիֆկոհլ (գերմանուհի). և 4) օր. Մանիկ Մալխասեան (հայուհի). սրա ծնողները լուսաւորչական են եղել, բայց յետոյ ամերիկական միսիոնարների չնորհիւ, ընդունել են աւետարանականութիւնը։ Օրիորդը իւր կրթութիւնը ստացել է բողոքական ուսումնարանում։

Այսպէս, ուրեմն, պարզ երևում է որ այս որբանոցում ոչ մի հայ քահանայ կրօնի դաս չի աւանդում, հետևապէս ինչն է ստիպել «Frankfurt. Zeltung»-ին այսպիսի ստերը տարածելը։

Կիւրակիօրեայ ժամերգութիւնը տեղի է ունենում երեք լեզուով, $8^1/_2$ ժամին հայերէն, 10 ին գերմաներէն և $11^1/_2$-ին անգլիերէն։

Հայերէն ժամերգութիւն կատարելու համար, Պաստոր Բրոկէսը Թորլուսութիւն է խնդրել «Rebert Coleg»-ի տեսչից և այնտեղից մի քանի երիտասարդ «եղբայրներ» են յաճախում ժամերգութեան արարողութիւնը կատարելու։ Իսկ արձակուրդների պատճառով այդ գերը իւր վրայ է ստանձնել հայ բողոքական Վարժապետարանը, որև մեծ ուրախութիւն է պատճառել մանուկներին, ինչպէս յայտնում է ինքը՝ պաստոր Բրոկէսը։ Երեխաները նկրքներ չկան։ Երկու մարմնի մէջ բարախում է մի սիրտ. Մէկը միւսի համար պատրաստ է ամեն մի զոհողութեան.

Ընկերներից մէկը սիրահարուած է մի գեղեցիկ, մատաղահաս ու կրթուած օրիորդի վրայ և քանում է իր սիրտը միւս ընկերին։ Վերջինս ծանր սրտամաշկիկ ցաւ է զգում, տեսնելով իր ընկերոջ սէրը և հաստատ իմանալով որ նա երբէք գոհացումն չի պիտի առանայ։ Ամեն կերպ աշխատում է խաղաղացնել ընկերի սիրտը և տրամադրել նրան հետ կենալ այդ սիրուց, բայց ընկերն անողոք է ու պահանջում է միւս ընկերից ասել թէ ինչու՞ սիրած օրիորդը չէ պատասխանում իր սիրոյն։ Երկար տատանումներից, հոգեկան տանջանքներից յետոյ, ընկերը վերջապէս ստիպուած է լինում ասել—«որովհետև դու սպասող ես»։ Այդ օրուանից սպասողը ատում է իր ընկերին, վիրաւորուած ճշմարտութիւնից։ Եվ որ արդարև գեղեցիկ է այս պատմութիւնը, ճիշտ է հոգեբանօրէն։ Այժմ մտածեցէք, ընթերցող, թէ արդեօք այս դէպքում ճշմարտութիւնն էր վիրաւորողը։ Ինձ թուում է թէ—ոչ. այլ ընկերներից մէկի ֆիզիքական և նրանից հետևած հոգեկան դրութիւնը, որ զուրս է սովորականից, որ հրէշային է. իսկ եթէ մարդու մէջ վիրաւորվում է հրէշը, չէ կարելի ասել թէ մարդն է վիրաւորվում ընդունելով հանդերձ որ այդ հրէշի մէջ իսկ ապրում է մարդ և շատ պատուական մարդ։

Ուսանող՝ Տէր-Ազգարեանց Տէր-Յարութիւնեանց։

29/17-ն զեկտեմբերի 1897 թ.

Մարբուրգ (Հեսսէնում)։

ՆՆԴԵՑԱՆ ՏՕՆԵՐԸ ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ոչ մի տեղ գուցէ Ծննդեան տօները այնպէս հանդիսաւոր, փառահեղ կերպով չեն տօնվում, որպէս Գերմանիայում. որովհետև այս տօնը մեր Վարդավառի նման միացնում է գերման ժողովրդի երկու մեծ տօները.—հին հեթանոսական, ազգայինը և նորը—քրիստոնէականը։ Մի ամսից յ վեր է, որ ամբողջ Բերլինը պճնուել, զարդարուել է, Բեթղեհէմ հովիւների մի անյայտ այրում աշխարհ եկած մանկան ծննդեան տօնին հանդիսանալու։

Գլխաւոր փողոցներն ու վաճառատները արտակարգ կեանք ու կենդանութիւն են ստացել և այս մի երկու շաբաթում Բերլինը աւելի է առևտուր անում, քան ամբողջ ամիսների ընթացքում։ Մի յայտնի վաճառատուն անկարող լինելով իւր յաճախորդների բազմութեանը բաւականութիւն տալ, մուտք էր նշանակել. այդ էլ չօգնելով, ստիպուած էր եղել վերջին կիրակի օրը ամբողջովին փակ պահել վաճառատունը։

Դուրսէ գանուին անձինք որ միմիայն վիճելու ցանկութիւնից դրդուած ասեն թէ հապա ինչպէս սիրոյ և բարութեան երգերի թագաւորներից մին—Վիկտոր Հիւգօ հրէչադունեղ Քուազիմօդոյի սրտի մէջ գտաւ սէր և զգացմունք։ Այդ հարցումը միայն կապացուցանէ ամենայն ճշդութեամբ իմ ասածս և ինձ պատասխանելու հարկ չկայ դրան։

Եւելի նեղքև ես ցոյց կըտամ նոյն իսկ մեր հայկական կեանքից թէ մտավախութիւնը և սոսկութիւնը ինչպէս է վանհնում ճշմարտութիւնից. բայց այժմ անհատական հիւանդ երևոյթները չընդհանրացնելու իրքև մի ապացոյց՝ անհրաժեշտ եմ համարում առաջ բերել և մի այլ օրինակ ֆրանսիական նորագոյն գրականութիւնից մի թատերական գրուածքից, որի մասին մի քանի օր առաջ առիթ եմ ունեցել խօսելու «Արձագանքի» էջերում։

Պօլ Հերվիէն գրել է մի կօմեդիա „Les tenailles“ (Աքցաններ) անունով, որի մէջ չգիտեմ ինչ պատճառով, ինչ բարոյական զգացմունքից դրդուած՝ մարդկային արժանաւորութիւնը հաւասարեցնում է կեղտի հետ, առանց որևէ էական անյապաղելի պատճառի, նոյն իսկ առանց որևէ, այսպէս ասած, «յարգելի» պատճառի մի կնոջ հարկադրում է զգուելի փիզիլարութիւններ, կրկնել խօսքեր, խօսքեր խօսքեր ու խօսքեր, որոնք նման են ամենավտանգաւոր թոյն բովանդակող օձկեղծած դեղատոմիկների ու ընդու-

Մեծ մտաղիններդը իրանց զարգերի շռայլութեամբ, նորութեամբ ու փարթամութեամբ, ճաշակով և օրգինալիտէտով աշխատում են միևը գերազանցել միւսին։ Մենք այստեղ դես ոչ ձիւն, ոչ ձմեռ ունինք. սւստի և բաւանում ենք այդ մտաղիններդի ներկայացրած արհեստական ձմեռներով հիանալուը մի տեղ ձիւնը փաթիլ-փաթիլ ցած գալով ծածկել է մի սպիտակափառ ծերունու--Weihnachtsmann-ի ալեզարդ մօրուքն ու այտերը. մի այլ տեղ ձիւնի հետ հրաշալի կերպով միացած է և փեթորիկը, որ աղուամազից ներկայացրած ձիւնը տակն ու վրայ անելով նետում է անդունդարձ անդղի—արհեստական մաքրկանց երեսին։ Մինչ մտաղիների ներսը այդպիսի ձմեռ է, դուրսը, փողոցները կատարեալ գարնան տեսք են ստացել անհամար եղևնիներից, որոնք կենդանի չարերով հիանալի ծառուղիներ են կազմում տարածելով իրանց թարմ բոյրը ամեն կողմ։ Գրանք բերուած են տօնածառի համար։ Տօնածառը մեր մէջ մտել է Գերմանիայից, որի նշանակութիւնը մեզ համար անհասկանալի և մի տեսակ չհայկութիւն է համարվում։ Գերմանացու համար ընդհակառակը, դա նոյն նշանակութիւն ունի, ինչ որ կարմիր հաւկիթը մեզ համար զատիկն։ Ամեն մի գերմանացի, աղքատ թէ հարուստ, ամեն մի հիմնարկութիւն, հիւանդանոց լինի կամ զօրանոց, ուսումնարան թէ բանտ, պէտք է տօնածառ ունենայ։ Գերման եկեղեցին էլ մեր Լուսաւորչի նման հասկանալով ազգային այդ մեծ տօնի ժողովրդի համար արիւն մարմին դարձած լինելը, ընդունել է այն եկեղեցու մէջ և զեկտեմբ. 25-ին ամեն մի եկեղեցի Քրիստոսի ծնունդն աւետելու հետ բաւարարութիւն է տալիս ժողովրդի սովորութիւն, եկեղեցու մէջ հանդիսաւոր կերպով տօնածառ ներկայացնելով։

Տօնածառը կարծեմ հին գերմանական նոր տարու նշանն է. գերմանացի մանուկը հաւատացած է, որ թէ այդ ծառը և թէ տօնի առթիւ ստացած ընծաները Weihnachtsmann (ծննդեան տօնի մարդ)—Տօնամարդն է բերում, որ իւր լիաստաց բարիքները այդ օրը բաժանում է ամբողջ աշխարհի բարի մարդոց և մանուկներին։

Ինչպէս որ մեր մամիքը մեզ հաւատացնում էին թէ սուրբ Նարգսի ձին իւր ոտի հետքը թողել է նրա տօնի առթիւ պատրաստած փոխինդի վրայ, այնպէս էլ գերմանացին հաւատացնում է իւր մանուկներին, որ տօնածառը իւր բոլոր կարգ ու սարքով, իւր բոլոր հրաշալիքներով Տօնամարդու պարգևներ են։ Ուստի և ծառը, նրա պատրաստութիւնը, ընտրութիւնն այդտեղ չէ վիրաւորում հիւանդին, թէև նրա էութիւնը մի մազաչափ չփոխուեց։ Ուրիշ դէպքում հետևել երևոյթին է նպատակում. հիւանդը դիմում է բժշկին, ակամայ, ինստինքաբար, ուղղակի կենսասիրական, ապրելու զգացմունքից դրդուած. նա ինքը շատ լաւ գիտէ իւր հիւանդութիւնը, բայց նա չէ ուզում լսել բժիշկից այդ հիւանդութեան մասին, իսկ լսելուս վիրաւորվում է և շատ անգամ նոյն իսկ ատում է բժշկին։ Ես վերջըի միայն ներկայ օրինակները իմ ընդունած տեսակէտին կօնկրէտ կերպարանք տալու նպատակով. իսկ կեանքի անթիւ երևոյթներից, անթիւ էլ օրինակները կարելի է քերել։ Ձշմարտութեան ազդեցութեան կապը նրա լսողի հոգեկան և ֆիզիքական դրութեան հետ աքանչելի կերպով արտայայտուած է մի փոքրիկ դեղեցիկ գրուածքի մէջ, որ ես կարդացել եմ սրանից 10—15 տարի առաջ, չեմ յիշում հայոց որ թերթում, բայց յիշում եմ որ այդ գրուածի վերնագիրն է «Գաղտնիքը բացուեց» և հեղինակն է մեր երիտասարդ վիպասան պ. Մուրացան։

Այնքան գողարիկ է այդ երկու երեք երեսի վրայ տեղաւորուած փոքրիկ գրուածքը, այնքան ճիշտ հոգեբանութիւն կայ նրա մէջ, որ ես այստեղ չեմ կարող ինձ զսպել, առաջ չբերել նրա կարճ բովանդակութիւնը.—երկու ընկերակիցներ են, կրթուած, ուսումնական մարդիկ, կապուած ընկերական սիրով, գաղափարակիցներ, մրցակիցներ։ Նրանց մէջ գաղտնիք չկան։ Երկու մարմնի մէջ բարախում է մի սիրտ. Մէկը միւսի համար պատրաստ է ամեն մի զոհողութեան.

Ընկերներից մէկը սիրահարուած է մի գեղեցիկ, մատաղահաս ու կրթուած օրիորդի վրայ և քանում է իր սիրտը միւս ընկերին։ Վերջինս ծանր սրտամաշկիկ ցաւ է զգում, տեսնելով իր ընկերոջ սէրը և հաստատ իմանալով որ նա երբէք գոհացումն չի պիտի առանայ։ Ամեն կերպ աշխատում է խաղաղացնել ընկերի սիրտը և տրամադրել նրան հետ կենալ այդ սիրուց, բայց ընկերն անողոք է ու պահանջում է միւս ընկերից ասել թէ ինչու՞ սիրած օրիորդը չէ պատասխանում իր սիրոյն։ Երկար տատանումներից, հոգեկան տանջանքներից յետոյ, ընկերը վերջապէս ստիպուած է լինում ասել—«որովհետև դու սպասող ես»։ Այդ օրուանից սպասողը ատում է իր ընկերին, վիրաւորուած ճշմարտութիւնից։ Եվ որ արդարև գեղեցիկ է այս պատմութիւնը, ճիշտ է հոգեբանօրէն։ Այժմ մտածեցէք, ընթերցող, թէ արդեօք այս դէպքում ճշմարտութիւնն էր վիրաւորողը։ Ինձ թուում է թէ—ոչ. այլ ընկերներից մէկի ֆիզիքական և նրանից հետևած հոգեկան դրութիւնը, որ զուրս է սովորականից, որ հրէշային է. իսկ եթէ մարդու մէջ վիրաւորվում է հրէշը, չէ կարելի ասել թէ մարդն է վիրաւորվում ընդունելով հանդերձ որ այդ հրէշի մէջ իսկ ապրում է մարդ և շատ պատուական մարդ։

նակ են իրենց արտաքին տեսքով գրաւել ամեն մի մանկամիտ լսողի և միևնոյն ժամանակ զգուանք ու զայրոյթ ներշնչել ամեն մի մարդու որ որոշ հասկացողութիւն և զգացմունք է մշակել, հասարակական կեանքի և նրա ստեղծած սոցիալական օրէնքների վերաբերմամբ։

Տեսնում էք մի մարդ, որ կատարելապէս օրինաւոր, ազնիւ, առաքինի, ֆիզիքապէս ևս կատարելապէս առողջ մարմնի և առողջ ուղեղի տէր լինելով, չէ կարողանում հասկանալ, թէ ինչ է կամենում այն կինը, որին այնքան յարգում է և որ համաձայնուել է իւր կինը դառնալ։ Եւ ահա այդ կնոջը՝ հեղինակը հարկադրում է ընկնել, մինչդ ամուսինն գտնել գաղտնի անառակութեան մէջ, ու մարդուն տասն տարի անցնելուց յետոյ ասել թէ՝ այդ գաւակն իրանը չէ. . . Եւ այս բոլորը ֆրանսիացի հեղինակն անուանել է կոմեդիա։ Տարօրինակ է, այնպէս չէ—մարդկային ոգին ինկվիղիցիայի ենթարկել մի կնոջ կրքերի պատճառով, իբրև թէ օրէնքի անպէսքութեան պատճառով, մի օրում աշխատիլ փտեցնել այն, ինչ որ ամենամեծ և սրբազգուել է դարերով, ամբողջ աշխարհի երեսին և դրա համար մարդկանց զժոխային հոգեկան տանջանքների ենթարկել։ Այո, շատ տարօրինակ է տեսնել այդ զրամայի կոմիկական կերպարանք ստացած։ Բայց Ֆրանսիացի ճարպիկ հեղինակը անշուշտ զգալով, թէ իւր գրուածքը բոպէական սխալ տպաւորութիւնից յետոյ ինչ բէակցիա պիտի

ծաների առնելն ուղատաւորելը՝ կատարվում է մանուկներից ծածուկ, որոնք սրտատրոփ սպասում են այն հրապուրիչ վայրկեանին, երբ սենեակի դուները բացուած՝ նրանց առաջ բաց պիտի անեն երեւակայական՝ մարդու բերած հիանալի ծառը իւր ճրագներով ու պարգեւներով:

Ուսումնարան յաճախող մանուկները յատուկ այդ օրուայ համար ոտանաւոր են սովորում, որով գովում են այդ Տօնամարդը, իրանց ծնողներին և խօսք տալիս միշտ պարկեշտ, համեստ և աշխատասէր լինելու: Ոտանաւորից յետոյ ընտանիքի անդամները շնորհաւորում են միմեանց համբուրուելով և ապա սկսվում է ընծաների բաժանում. բլբիչ, հիացմունք, զարմանք, բաւականութիւն, այդ է ամեն մի գերմանացու տունը տիրապետող տարրը տօնածառի առաջ:

Ուսանող:

26-ն դեկտեմբ. 1897 Թ:
Բ ե ր լ ի ն:

«Արձագանքի» ներկայ 151-ը համարը այս տարուայ վերջինն է. իսկ հետեւեալ 1898 թուի առաջին համարը լոյս կը տեսնի յունուարի 1-ին, հինգշաբթի, մէկ եւ կէս թերթ մեծութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ազգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Մկրտիչ 1-ը, մեր ստացած տեղեկութեանց համեմատ, կըբարեհաճէ ժամանել մեր քաղաքը երեքշաբթի, 30-ին:

* * *

Երեկ առաւօտ 27-ին ուղեւորուեցին Թիֆլիզից Դիլիջան՝ ազգիս Վեհափառ Հայրապետին դիմաւորելու՝ Թիֆլիզի թեմի առաջնորդ սրբազան Գէորգ Արք-եպիսկոպոս Սուրէնեանը և Վեհափառի եղբօրորդի պ. Խորէն Խրիմեանը:

* * *

Այսօր ուղեւորուեցին Աղստաֆա կայարանը Նորին Վեհափառութեան դիմաւորելու համար Շուշուայ թեմի կառավարիչ արժ. Սահակ վարդապետ Բաղդասարեանը և Թիֆլիզի կոնսիստորիայի նախանդամ արժ. Թադէոս վարդապետ Առիւծեանը:

* * *

Դեկտեմբերի 26-ին Կ. Պոլսից Թիֆլիս ժամանեց Ս. Երուսաղէմի վանքի միաբան Գէորգ ծ. վարդապետ Երեցեանը:

* * *

Կ. ՊՈԼՍԻՑ հեռագրում են «Ber. Tag.», որ թերթին կառավարութիւնը մտադիր է հիւպատոսութիւն հաստատել Ժնէվում. Եւ որովհետեւ Շվէյցարիայի մէջ է կենդրոնանում հայկական յեղափոխական շարժումը, ուստի և այդ հիւպատոսը պաշտօն կունենայ աւելի ուշադիր զննողութիւն ունենալ այնտեղի յեղափոխական տարրերի վրայ:

* * *

Օդեսայից հեռագրում են «Ռուսաց գործակալութեան», որ դեկտեմ. 21-ին Կ. Պոլսի նոր ռուսաց դեսպան Ի. Ա. Զինովիեվը Երուսաղէմի ընդհանուր հիւպատոս Եակովլեվի և դեսպանատան խորհրդական Չչերբաչեվի հետ միասին «Կայսր Նիկոլայոս երկրորդ» շոգենաւով ուղեւորուեցին դէպի Կ. Պոլիս:

* * *

ՌՈՒՍԻԱ և ԹԻՒՐՔԻԱ.— Կ. Պոլսից հեռագրում են դեկտ. 17-ից (29) «Frank. Zeit.»-ին, որ ռուսաց կառավարութիւնը մի անգամ եւս և շատ սպառնական կերպով այսօր յիշեցրեց Դուռն պատերազմական տուգանքի մնացած մասը վճարելու մասին: Դուռը մտադիր է առ այժմ 250,000 ոսկի վճարել և «Times»-ի ասելովը 500,000 ոսկի:

—Կ. Պոլսի ռուսական նոր դեսպանի Թիւրքիա գնալու առթիւ, անգլիական թերթերը զանազան ցնցող լուրեր էին հաղորդել դեսպանի ստացած հրահանգների վերաբերութեամբ:

«Nord» լրագիրը մատնանիշ անելով այդ բոլորը, ասում է:

«Մենք հնարաւորութիւն ունինք յայտարարելու, որ պ. Զինովիեվին տուած հրահանգները բոլորովին չեն տարբերվում իւր նախորդին տուածներից: Ռուսիան բարեկամական յարաբերութիւն ունի Թիւրքիոյ հետ և այսուհետեւ էլ այնտեղ կունենայ քրիստոնեաներին ապահովեցնելու և բարենորոգութիւնները գործադրել տալու քաղաքականութիւնը, ոչ մի քայլ ետ չընելով և ոչ մի այնպիսի զիջում չանելով, որ համապատասխան չէ փադիշահի գերիշխանական իրաւունքներին:

* * *

«Չերն. Վեստ.»-ը հաղորդում է, որ դեկտեմբերի 23-ին, մի օտար շոգենաւի վրայ նստացրել են Բաթումից արտաքսելով 250 տաճկահպատակ (հայեր) անցագիր չունենալու պատճառով, իսկ միւս օրը, դեկտեմբերի 23-ին, նոյն վիճակի են ենթարկուել մօտ ութսուն անձինք:

* * *

Կառավարչական շրջաններում վաղուց է հարց բարձրացած գիւղերում կառավարութեան հաշուով արհեստանոցներ հիմնելու: Աւելորդ է ասել թէ որքան մեծ օգուտներ կունենան այդ հաստատութիւնները, մեծ զարկ տալով պետութեան մէջ արհեստների ծաղկելուն և արդիւնաբերութեան յառաջադիմութեանը: Ռուսիայի շատ նահանգներից այժմ ժողովրդի և զեմստվօների կողմից բազմաթիւ խնդիրներ են ստացուած, որոնցով զեմստվօները պատրաստակամութիւն են յայտնում իրանց կողմից օգնել կառավարութեան՝ այդ բարի մտադրութեան իրականանալուն: Ի նկատի ունենալով թէ որքան բազմաթիւ արուեստներ կան մեր երկրում և թէ որքան նախնական վիճակի մէջ են նրանք, վերին աստիճանի ցանկալի է որ այդպիսի արհեստանոցներ բացուէին և Կովկասի գոնէ մեծ կենդրոնական գիւղերում:

* * *

Երկրագործական և պետական կալուածների նախարարութիւնը, Ռուսիայի շերամի արդիւնաբերութեան գործին առանձին զարկ տալու նպատակով, ի միջի այլոց վճռել էր ձրիաբար շերամի սերմ բաժանել պետութեան մի քանի դպրոցներին եւ գիւղերին, ուր կարելի է պարապել շերամապահութեամբ: Այդ սերմերը պիտի բաժանէր Կովկասեան շերամապահական կայարանը, ինչպէս և մասամբ անում էր մինչև այժմ. սակայն այժմ նախարարութիւնը փորձով տեսաւ որ Կովկասեան շերամապահական կայարանը չէ կարողանում ժամանակին անվնաս սերմ հասցնել Հարաւային Ռուսիայի գաւառներին, ուստի որոշել է որ այսուհետեւ սերմերն ուղարկուեն Խարկովի և Ումանի երկրագործական դպրոցներից:

* * *

Քաղաքային խորհրդի այս տարուայ վերջին նիստը տեղի կունենայ վաղը դեկտեմբերի 29-ին: Այդ օրը կըքննուի ի միջի այլոց երեխայոց համար հաստատուած հիւանդանոցի խնդիրը:

* * *

Մեզ ուղարկուած է «Հաշիւ խնամակալութեան հոգեւորականաց հայոց Նոր-Նախիջեւանի եւ շրջակայ վեց գիւղօրէից» 1896 ամի: Այդ հոգեւորականաց խնամակալութեան ընկերութիւնը մի գեղեցիկ պատկառելի հիմնարկութիւն է որ սկիզբն է առել 1894 Թուականի յունիսի 1-ին: Նոր-Նախիջեւանի և շրջակայ 6 գիւղերի հոգեւորականները դիմեցին տեղական վիճակային կոնսիստորիային, ներկայացնելով մի կանոնադրութիւն և խնդրեցին որ վիճակային հոգեւոր ատեանը միջնորդէ բարձրագոյն հոգեւոր իշխանութեան՝ հաստատելու յիշեալ կանոնադրութիւնը: 1895 թուի դեկտեմբերի 1-ին հաստատուեց կանոնադրութիւնը և այժմ «խնամակալութիւնը» գոյութիւն ունի և ինչպէս երեւում է նրա համառօտ հաշուից, իւր միջոցները ներածին չափ ծառայում է իւր բարի նպատակին: Նայելով խնամակալութեան տարեկան հաշուին, 1896 Թուականի ընթացքում մուտք է եղել 1979 ռուբլի:

Հետաքրքրական են մուտքի աղբիւրները, այն է 1) Նոր-Նախիջեւանի հոգեւոր կառավարութիւնից ստացած գումար, որ կտակած է տիկին Գեղեցիկ Պոպովեան—1210 ռբ. 45 կոպ., 2) Նոր-Նախիջեւանի և 6 գիւղերի եկեղեցիների նըպաստները—300 ռբ., 3) Նոր-Նախիջեւանի և 6 գիւղերի քահանաների անդամավճարները—345 ռ., 3) սարկաւագների և դպիրների անդամավճարները —76 ռ., 5) Նախանձախնդիր անդամների վճար — 10 ռ., 6) Կամաւոր նուէրներ—35 ռ., և 7) դրամների տոկոսներ —3 ռ. 14 կոպ. Նոյն տարին ծախք է եղել 324 ռուբլի 15 կոպէկ, որից տրուած են նպաստներ երկու դպրոցների, մի քահանայի, մի այլ քահանայի Թաղման ծախք և մնացածը գիւտնական ծախքեր են: Հետեւեալ տարուան նախահաշիւը կազմուած է աւելի ընդարձակ—929 ռբ. 75 կոպ. և ծախք 680 ռուբլի:

Յիշեալ տարուան ընթացքում անդամների թիւը եղել է 53 քահանաներ, սարկաւագներ և դպիրներ:

Կատարեալ յաջողութիւն ենք ցանկանում այդ համակրելի հիմնարկութեան:

* * *

Այսօր, կիւրակէ, 1 ժամին կըկատարուի առաջին քաղաքային գիշերային ապաստանարանի հանդիսաւոր բացումը: Այդ ապաստանարանը հաստատուած է Վօրօնցովեան փողոցի վրայ, Մելիքովի տանը, Չիթախեան գործարանի հանդէպ:

* * *

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են թէ աշխիկայ տարուան սկզբից Պետերբուրգում պիտի հրատարակուի մի նոր ռուսական շաբաթերթ ճանապարհորդների համար, «Ճանապարհորդի գրադարան» անունով:

* * *

ՀԱՂԲԱՏԻՑ Մեզ գրում են: Տփխիսա—Կարուց երկաթուղին արդէն հասել է Ախտալայի տակ. օրէնը դարսում են կոճեր և երկաթներ մէկ վերստ տարածութեամբ. այս ձմեռ հաւանական է, որ մինչև Ղարաքիլիսա հասնի: Կողմնակի ճանապարհորդներ ընդունում են գաղտնի. շատ լաւ կըլինի, որ այդ ձեր վերջանայ և աշկարա կերպով—տոմսակով՝ ընդունեն գնացողներին, որով և մեծ դիւրութիւն կըպատճառեն գիւղացոց:

Հասարակութեանը արդէն յայտնի է, որ երեք տարի առաջ Հաղբատայ Վանահայր Ցակովբ վարդապետ Նորատունկեանցին սպանեցին, որը ամենայն եռանդով մեր վանքի նորոգութիւնը բռնել էր և գլուխ էր բերում պատուական կերպով թէ վանքի եկամտով և թէ իւր անձնական գումարով: Հանգուցեալը սպանուելով, բոլորովին կողոպտուեցաւ, այնպէս որ ոչ մի դրամական միջոց չըգտնուեցաւ գոնեա պահանջելի ծախքերը հոգալու: Գերեզմանը մնացել էր առանց տապանաքարի շնորհիւ այն հանգամանքի, որ հանգուցեալը իբրև վանահայր և վերանորոգող՝ լաւ անուն էր վաստակել. Հաղբատայ մի քանի ծերունի կանայք սկսեցին իրանց մէջ տունէ տուն փող ժողովել, գերեզմանաքար առնել, մատաղացուներ գնել, պատարագ անել տալ և ապա տապանաքարը վրան ջգցել տալ, օրհնելով նրա յիշատակը և հոգեհաց տալով աղքատ ընտանեաց. օրինակը հազուադէպ է և սրտայոյզ, թէ՝ բարեգործ մարդոց յիշատակը երբէք չի կորչիր:

* * *

ՔԻՒՐԴԱՄԻՐԻՑ մեզ հաղորդում են հետեւեալ բնորոշ դէպքը: «Այս օրերս տեղական հաշտարար դատաւորի մօտ քըննվում էր երկու հայ գիւղացիների գործը: Նրանցից մէկը գանգատուել էր դատաւորին թէ իւր միւս համագիւղացի իրան վիրաւորել է: Դատաւորն, ինչպէս ընդունուած է, առաջարկեց գործը վերջացնել հաշտութեամբ:—«Շատ լաւ, պ. դատաւոր, ասաց վիրաւորուած գիւղացին, համաձայն եմ, միայն թէ թող ինձ վիրաւորողը 15 ռուբլի տայ յօգուտ աղքատ հայ գաղթականների»: Հակառակորդը համաձայնուեց և իսկոյն վճարեց 10 ռ. յօգուտ հայ գաղթականների և 5 ռուբլի յօգուտ Շամախու աղքատների»:

* * *

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Պ. Խմբագիր,

Ամսիս 13-ին Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութեան Կարսի ճիւղի օգտին կայացաւ մի պարերեկոյթ, որից մուտք ըստացուեցաւ 470 ռ. 40 կ., իսկ ծախքերի համար պետական դրոշմների արժէքի հետ միասին վճարուեցաւ 91 ռ. 15 կ., զուտ արդիւնք մնաց 379 ռ. 25 կոպէկ:

Թոյլ տուէք, յարգոյ խմբագիր, նոյն ճիւղի վարչութեանը հրապարակապէս շնորհակալութիւն մատուցանել այն յարգելի անձանց, որոնք չխնայեցին իրանց ջանքերը պարերեկոյթը ամեն կերպ արդիւնաւէտ դարձնելու համար:

Վարչ. նախ. Ս. Բաղդասարեան.
Անդամ-գործավար Ս. Գրիգորեան:

II

Պ. Խմբագիր,

Վերջապէս իննամեայ «Զաքարիական» լռութիւնից զկնի «քահանայից ապահովութեան գանձարանի» վարչութիւնը որոշեց ընդհանուր ժողով գումարել, հաշիւ ներկայացնել և նոր անդամոց ընտրութիւն կայացնել: Ամսոյս 26-ին երեկոյեան ժամի 7-ին, կայացաւ ժողովըն նախագահութեամբ վարչութեան նախագահ հայր Գրիգոր աւ. քահանայ Տէր-Բարսեղեանցի, ներկայութեամբ 36 քահանայից: Ժողովի սկզբին հայր նախագահը փորձ փորձեց փաստել իւր և թէ վարչութեան անտարբերութեան պատճառը, թէ ինչու իւր ժամանակին չեն կազմել ընդհանուր ժողովներ և հաշիւներ ներկայացրել. սակայն նախագահի այս փորձը անյաջող անցաւ, մանաւանդ որ եղան աւելի դրական և իրաւացի նկատողութիւններ, որոնք ծնունդ էին և՛ այն զովասանաց, որ շռայլեց հայր-նախագահը իր ընկեր-անդամոց հասցէին, հակառակ այն ասացուածի, թէ՝ «մի գովեսցէ զքեզ բերան քո»: Ընդհանուր հաշիւը կարդացուեցաւ, միայն վարչութեան նախագահ հօր կողմից չըթոյլատրուեցաւ ոչ մի քննադատութիւն, ուստի և իսկոյն ձեռնամուխ եղան անդամոց ընտրութեան. ընտրուեցան՝ հարք—Արսէն քահանայ Բաղրատունի, Աշոտ քահանայ Թէմուրազեանց, Եղնիկ քահանայ Երզնկեանց, Գրիգոր քահանայ Չերմազանեանց, Գրիգորիս քահանայ Երզնկեանց, Զաքարիա քահանայ Զարգեղեանց և Էմմանուէլ քահանայ Նազարեանց. գանձապահ—Ստեփան քահանայ Սամուէլեան: Ընտրութիւնը կանոնաւոր էր, ղեկավարութեամբ ընդհանուր ժողովի նախագահ Արսէն քահանայի Բաղրատունու. բոլորը ընտրուած են նորեր: Յուսանք, որ սոքա նախորդների անտարբերութեան փոշին կըթօթափեն և՛ սրտով ու գիտակցութեամբ կըվերաբերեն իրանց գործին:

Դէտ:

* * *

Պ. ՇԱՀԼԱՄԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Ուրբաթ օրը, դեկտեմբերի 26-ին, Թիֆլիզի ժողովարանի դահլիճում կայացաւ երգիչ պ. Շահլամեանի առաջին նուագահանդէսը:

Պ. Շահլամեանը, իբրև երգիչ, քաջ յայտնի է Թիֆլիզի հասարակութեան, ուստի ներկայ նկատողութեան մէջ առանձին խօսել նրա ձայնի մասին՝ աւելորդ ենք համարում. կասենք միայն, որ ձայնը մնացել է նոյնը իւր բոլոր լաւ և թոյլ կողմերով: Մի բան սակայն փոխել է պ. Շահլամեանը և չենք կարող ասել որ յաջող. Նա սկսել է երգել այնպիսի արիաներ, որոնք նորա ձայնին չեն համապատասխանում. օրինակ «Евгеній Онѣгинъ» և «Дубровскій» օպերաներից: Ի հարկէ չենք կարող ասել որ պ. Շահլամեանը փչացրեց այդ արիաները. ամենեւին ոչ, հասարակութիւնը այս հատուածներից յետոյ վարձատրեց երգչին բուռն ծափահարութիւններով, բայց այդ արիաների ընդհանուր մեղմ և պօէտիքական ոգին բոլորովին կորաւ. այնտեղ, որտեղ ըստ արիայի պէտք է երգէր piano, պ. Շահլամեանը բարձր ձայն էր հնչեցնում:

Աւելի յաջողութիւն ունեցան Իպպոլիտով—Իվանովի «Ճլղասի Բալաղա»-ն, իտալերէն լեզուով երգած ռոմանսները և «Պայացներ» օպերայի արիան: Ի դէպ, չենք կարող չնկատել, որ պ. Շահլամեանը սխալ արաւ, երգելով անթիւ արիաներից, ռոմանսներից յետոյ անհագին և դժուար «Պայացներ» օպերայի արիան: Ճիշտ է որ պ. Շահլամեանը աւելի քան զօրեղ ձայն ունի, բայց պէտք է փոքր ինչ խնայել այդ ձայնը...

Նուագահանդիսի վերջում պ. Շահլամեանը երգեց վրացերէն Բալանչիվաձէի «Նանա շվիլօ»-ն և վերջապէս «Կռունկ», «Հազար երանի», «Զայն տուր» և ուրիշ հայերէն ռոմանսներ: Այս երգերի վերաբերմամբ կրիտիկան խոնարհվում է և տեղ է տալիս անկեղծ հիացման:

Պ. Շահլամեանի հետ մասնակցող օր. Ցիմը բաւականին լաւ է նուագում:

Ռ. Յ.

* * *

Ցորենի համաշխարհային հունձը 1897 թուին, ռուսական «Առեւտրական արդիւնաբերական թերթի» հաղորդելով, անցեալ տարուայ համեմատութեամբ, պակասել է մօտաւորապէս 502 միլիոն փութով:

Ընդհանուր գումարը, վերջին երեք տարուայ ընթացքում 1000 փութ հաշուելով, էր.

1895	Թուին	4,222,492
1896	»	4,094,610
1897	»	3,591,813

Հնձի սակաւութիւնը նկատվում է Ֆրանսիայում 150 մլ. փութ և Իտալիայում 97 մլ. փութ-արդիւնաբերող երկիրներումն էլ հունձը լաւ չէր, բացի Փոքր-Ասիայից, Կանադայից և Միացեալ Նահանգներից, ուր 80 մլ. փութ աւելի հունձ եղաւ, քան անցեալ տարի:

Ամենից շատ հնձի սակաւութիւնը ունեցաւ Ռուսաստանը, 134 մլ. փութով:

Ամենից քիչ ցորենի ցանքս ունեցել են արեւմտ. Հնդկաստանը, Արժանտին, Ֆրանսիան, Ռուսիան, Ռումանիան, Բուլ-

---

առաջացնէ ընթերցողի կամ թատերական հանդիսատեսի մտքում, իւր կոմեդիայի մէջ դրել է մի տող, որի հիման վրայ միշտ կարող է փախուստ տալ կրիտիկայի դատապարտութիւնից: Նա իւր հերոսուհու մասին գրել է, թէ «եզակի բընաւորութիւն ունի»: Ուրեմն—հիւանդ է, հրէշ է:

Ահա կրկին ապացոյց մեր ասածին՝ թէ հիւանդ, հրեշային երեւոյթներն չեն կարող ընդհանրանալու իրաւունքի յաւակնութիւն ունենալ, չեն կարող օրէնք դառնալ: Իղձա կայ, այո, գրուածքի մէջ և առանց նրան ոչ ոք էլ չէ կարող կարդալ կամ լսել այդ գրուածքը. բայց իղձայի իրականանալուն նպաստող փաստերը հետեւանք չեն իսկական, ճշգրիտ, առողջ, բարոյական կեանքի, ուստի և ուժեղ չեն, զզուելի են և պաշտպանութիւն չեն գըտնի առողջ մտքերի և սրտերի կողմից: Ենթադրենք մի շրջանից հանեցէք, դրեք միւս շրջանի մէջ, նա չի փոխուի, նոյնը կըմնայ, որովհետեւ առաջին շրջանում իսկ իւր փչանալու պատճառը ոչ թէ շրջանն էր, այլ ինքը: Ամենայն մի անհատ իրաւունք ունի երջանիկ լինելու, բայց ոչ ի հաշիւ ուրիշի դժբաղդութեան և մանաւանդ ոչ ի հաշիւ հասարակական դժբախտութեան: Եւ եթէ աղնիւ հրապարակախօս և սօսիալիստ Լասալն ասել է—«եթէ ճնշուած է մէկը, ճնշուած է ամբողջ մարդկութիւնը», այդ այնպիսի «մէկ»-երի համար է, որոնք հասարակական զգացմունք ունին և որոնք իրանց անձնական պահանջները չեն ձգտում իբր օրէնք քարոզել:

Օրէնքը դրական է և ոչ բացասական: Իսկ երբ նրա մէջ բացասական տարր մտնի, նա այլ եւս օրէնք չի մնայ: Այս խօսքերից յետոյ անհնարին և աւելին ասենք, անբնական կըլինի չյիշել և հայկական «Les tenailles»-ը, որ հայ տաղանդաւոր դրամատուրգի պ. Սունդուկեանի գրչի կամքով քաղուել է հայկական կեանքից և՛ մկրտուել է «Ամուսիններ» անունով: Խնդրում եմ ընթերցողին վերականգնել իւր յիշողութեան մէջ Պօլ Հէրվիէի «Les tenailles»-ի բովանդակութիւնը և համեմատել նրան պ. Գ. Սունդուկեանի «Ամուսինների» բովանդակութեան հետ և տեսնել թէ ինչ էական զանազանութիւն կայ նրանց մէջ: Առաջինի մասին մենք արդէն խօսեցինք. դառնք այժմ երկրորդին.—Այստեղ հերոսը կինը չէ, այլ մարդը, այսինքն տղամարդը, Արկադեան ոմն սրիկայ, բառիս բուն նշանակութեամբ, անբարոյական, կանանց վրայ նայող իբրև ներգործական բայց հասարակ անունների վրայ. . . և միեւնոյն ժամանակ ունի իւր կինը, որին եկեղեցում սիրել խոստանալով՝ առանց մի որ և է առթի իւր կնոջ կողմից՝ անպատվում է իւր բաղդով, իւր անառակութեամբ, ամենապղծագրական անառակութեամբ. Նրա կինը—Մարգարիտը այս ամենը տեսնում է, զգում է, համոզվում է որ այս ամենը մարդկային արժանապատուութիւնը սասանող է—ոչ մի վայրկեան մի մտանաք որ Մարգարիտը հայուհի է, իսկ հայուհին ինքն ըստ ինքեան գիտութեան հեռազօտութեան և յարգանաց առանձին առարկայ է—նա տանջվում է հոգեպէս և ապա ֆիզիքապէս և համոզվում է որ այդ կեանքը շարունակելը անբարոյականութիւն է: Այդ գիտակցութիւնը հասունանալու վայրկեանին գալիս է Մարգարիտի մանկութեան բարեկամ Արտաշէսը. ով է նա, զինուորական է թէ ինչ, այդ միեւնոյն է Մարգարտի համար և միեւնոյն է մեզ համար, բայց նա գալիս է, ուզում է ազատել Մարգարտին: Եւ ահա Սցիլլան և Խարիբդան:

Մենք, որի անունն է հասարակութիւն, պահանջում ենք որ Մարգարիտն ազատուի, բայց Մարգարիտը չէ կամենում ազատ լինել այնպէս, ինչպէս իւր ամուսին Սամսոնեան է, չէ՞ որ Սամսոնեան ազատ է: Չէ՞ որ նա և՛ իւր սօտրագրեալ կնոջն է... սիրում և ազնւնին և՛ գրացու կնոջը, և՛ ամեն մէկ պատահածի որի անունն է կին, կամ աւելի ճիշտն ասած՝—էգ: Ահա և ձեզ անսանձացած մարդը: Սակայն Մարգարիտը չէ ուզում անասնանալ, իջանել. նա կին լինելով հանդերձ, մարդ է և ընդունում է մարդկային օրէնքները, միայն պահանջում է վատ օրէնքի փոխարէն, լաւ օրէնք: Ես կըգոհուիմ օրէնքին, ասում է նա, մինչև որ փոխուի այդ օրէնքը և ինձնից յետոյ եկողները նոյնքան սուրբ պահեն որքան ես եմ պահում այժմեան օրէնքը: Չէ՞ որ այս աքանչելի է: Բայց ինձ կասեն որ կեանքն այդպէս չէ: Այո կեանքն այդպէս չէ, բայց միթէ կեանքի մէջ բոլոր եղածներն օրէնք են: Ցանկանում էք օրէնք չինել այն ամեն, ինչ որ Էմիլ Զօլան նկարագրում է: Գոնէ ես չեմ ցանկանում: Ես համոզուած եմ որ անթիւ դարեր ապրող մի ազգ, որ ունի իւր դարերով մշակուած օրէնքները, պիտի վերաբերէ իւր օրէնքների փոփոխութեան գէթ այնքան զգուշութեամբ, որքան Շէքսպիրը վերաբերվում էր իւր հերոսների մարդկային զգացմանց: Միթէ Շէքսպիրը չէր կարող ամուսնացնել Համլէտին Օֆելիայի հետ. բայց չամուսնացրաւ. միթէ նա չէր կարող Օթելլոյին հասկացնել որ Դեզդեմոնան անմեղ է, բայց նա չհասկացրաւ այդ, որովհետեւ դա հակառակ կըլինէր հոգեբանութեան. իսկ օրէնքը մարդկային հոգեբանութեան դէկն է. երբ այդը դէկը կորաւ, մարդկային հոգեբանութիւնն էլ կըդառնայ քաօս ու օրէնսդիր կըդառնայ մանուկը, որ սեւեակը չէ զանազանում փողոցից:

Բայց ես շատ հեռացայ սկզբնական խնդրից, կըմտածէ ընթերցողը: Ճիշտ է: Եւ ես այստեղ յիշում եմ մի շատ նշանաւոր խօսք: Չկարծէք թէ այդ խօսքերն ասել է Շէքսպիրը, կամ Բայրոնը, կամ Հիւգօն եայլն. ոչ, այդ խօսքերը գրել է մի համեստ թղթակից, «Արձագանքի» մի հայ ուսանող, բայց գրել է Դրեզդենի Մադլէնում գուրգուրուած Ռաֆայէլի Մադօննայի առաջ հիանալուց և տուն վերադառնալուց յետոյ: Նա, համեստ թղթակից ուսանող պ. Ռ. Յ տուն վերադառնալուց յետոյ գրում էր «Արձագանքին» թէ գովել և քննել Մադօննային—սուտութիւն է: Որչափ գեղեցիկ է այս ասացուածը, որքան յափշտակութիւն կայ այդ ճշմարտութեան մէջ, բայց նոյնչափ որքան նրա մէջ թէ 2 անգամ 2 հաւասար է—4-ի: Չէ՞ որ դա ես անհերքելի ճշմարտութիւն է. բայց ով ուսուցիչ է եղել, նա գիտէ որ բաւական չէ ասել $2\times2=4$-ի, այլ և սովորած էք ասել $1+1=2$ և կրկին $1+1=2$ և ապա $1+1+1+1=4$ և ապա $2\times2=4$: Արդ, ինչ անենք, որ մեզ էլ նոյն է վիճակուած:

Revenons à nos moutons! Ես սկսել էի խօսել հումօրի մասին և ընթերցողը կարող է ասել թէ հեռացայ նիւթից: Դուցէ: Բայց ես ինձ թոյլ կտամ պնդել որ այնտեղը, ուր իսկական հումօրը չէ հասկացվում, նրան փոխարինում է զուտ ճշմարտութիւնը, կենսական, իրական, բայց չնկատուած ճշմարտութիւնը:

Ասացինք որ հումօրը ազատ մտքի ծնունդ է: Արդ, կարո՞ղ է արդեօք պօլսեցի հայը լինել հումօրիստ, հանդերձ իւր բոլոր տաղանդներով, իւր անուրանալի ընդունակութիւններով: Այդ հարցին կարող է պատասխանել ամեն ոք, որ որոշ գաղափար է կազմել պօլսեցւոյ մտքի «ազատութեան» վրայ: Մի բան ճիշտ է, որ դրեթէ ամէն պօլսեցի սիրում է կատակել, ծաղրել. բայց վերև մենք խօսեցինք հումօրի և ծաղրի մէջ եղած զանազանութեան մասին:

Հին եւրոպական և ասիական տիրապետող իշխաններն ունեցել են իրանց մօտ ծաղրածուներ և կատակներից ամենաներջանիկը իւր թշուառութեան մէջ եղել է նա, որ կարողացել է տիրապետողի պալատական ծաղրածու դառնալ: Բայց այդ ծաղրածուները շատ անգամ շատ դառն ճշմարտութիւններ են խօսել նոյն իսկ իրանց տիրապետողների և հասարակութեան երեսին, բայց երբէք նըրանց ասացուածների մէջ չէ եղել այն հումօրը, ինչ որ Դիոգենէսը ձգեց Աղէքսանդր Մակեդոնացու երեսին. «դէն կաց, արեւ մի կտրիր»: Իսկ Դիոգենէսը պալատական ծաղրածու չէր, այլ ազատ մտքի մարմնացումը:

Ամեն մի տաճիկ սիրահար է կատակի, ծաղրի և նոյն իսկ հումօրի, բայց առաջին երկուսը միշտ լսում է, իսկ երրորդը ոչ: Տաճիկ, ինչպէս առ հասարակ արեւելեան բոլոր բռնակալները, ամենայն ախորժանօք կըլսեն կատակները և ծաղրը, միայն թէ նրանց մէջ բովանդակուի շողոքորթութիւն: Այդ է պօլսեցւոց կատակների դպրոցը և ուրիշ կերպ էլ չէր կարող լինել: Հումօրի հետքն անգամ այդտեղ չէ կարող լինել. որովհետեւ հումօրը սուր ցնցող է, իսկ տաճիկը ցնցուելիս զայրանում է և պատժում, ուստի միայն սիրում է որ իրան դողջոյր սրսկեն և խրտուտ անեն հաճելի ծիծաղ պատճառելու համար: Դրա համար շատ անգամ կըտեսնէք, կըլսէք պօլսեցու բերնից ամենադառն ծաղր ու կատակ, որ վեր-

գարիա, Թուրքիա, Ցունաստան, Տրիպօլիս, Իտալիա և Աւստրօ-Հունգարիա։

* *

Ստացանք պ. Մ. Չմշկեանի կազմած պատկերազարդ լիակատար տարեցոյց և պատի օրացոյց 1898 թուի։ Տարեցոյցը բովանդակում է մի քանի պատկերներ։ Տարեցոյցի գինն է 30 կոպ. իսկ պատի օրացոյցինը—50 կոպ.

* *

Ռուսաստանի բոլոր երկաթուղիների տարածութիւնն այս տարուան հոկտեմբերի 1-ին հասնում էր 33,708 վերստի, որոնցից 7654 վերստը կրկնակի գծեր են։

* *

«ՏԱՐՏԻՒՖԻ» ԹԱՂՈՒՄԸ ԲԱԳՒՈՒԱՑ ՀԱՅՈՑ ԲԵՄԻ ՎՐԱՅ

Ամսոյս 24-ին հայոց խումբը խաղում էր Մօլիէրի հինգ գործողութեամբ «Տարտիւֆ» կօմեդիան։

Մօլիէրը վաղուց է մեռել և նրա թաղումը վաղուց է կատարուել, բայց նրա հանճարեղ գրուածքները դեռ կենդանի են բոլոր ազգերի բեմերի համար։ Ամսոյս 24-ին հայոց խումբը և մեր թատրոնական ղեկավարները թաղեցին Մօլիէրի աշխարհահռչակ «Տարտիւֆը»։

Ինչպէս պիեսայի մէջ բոլորը ընդդէմ են Տարտիւֆին և ամեն կերպ աշխատում են նրան տապալել, սպանել, այնպէս էլ այդ օրուայ խաղի մէջ բոլոր դերակատարները Տ. Տ Սիրանոյշ, Մելիքեան, օր. Մարի-Հրանոյշ պ. պ. Պետրոսեան, Վրոյր, Թուրեան, Ստեփանեան, Ալիխանեան և ուրիշները, (բացի պ- Աւետեանից, որ և շատ լաւ գիտէր իր դերը և շատ հիանալի էլ կատարեց. միակն էր, որ մեղմացրեց հասարակութեան զայրոյթը և իւր խաղով բաւականութիւն պատճառեց), կարծէք խօսք էին կապել և մի-մի քահ ու թի առած՝ գերեզման էին փորում, ոչ միայն Տարտիւֆի համար այլ և իրանց դերերի համար։ Ինչպէս պիէսայի մէջ Տարտիւֆը ինքն իր յանդուգն և չափից դուրս պահանջներով իր կորուստն է յառաջ բերում, այնպէս էլ պ. Վրոյրն իւր ուժերից վեր դերում դուրս գալով (Տարտիւֆ) ընդ միշտ թաղեց Տարտիւֆին։ Մի խօսքով այդ երեկոյ Մօլիէրի մօտ ուղարկեցին և նրա անմահ գրուածքը։ «Տարտիւֆը» մեռաւ հայոց խմբի համար, խումբը թաղեց շատ խոր այդ գրուածքը և նա յարութիւն կառնի, երբ յարութիւն կառնեն մեր հանճարեղ դերասանները և դերասանուհիները։

Ինչումն էր Տարտիւֆի թաղումը և խաղի անյաջողութիւնը։

Նախ «Տարտիւֆը» այն կլասիքական գրուածներից է, որի խաղի համն ու հոտը կայանում է խաղի նրբութեան, հոգեբանական խորին զգացմունքների հեշտ արտայայտութեան մէջ. Նամանաւանդ Տարտիւֆի իրան տեղը. Նա խաղ, հաբայ-հրոց չունի, նա վազվզել—սուր հրացան չունի. Նա նստած կամ կանգնած է միշտ, բայց մեռած չի, նրա կուրծքը լի է բուռն կրքերով, բայց նա բոլորը զսպում է, յայտնում է շատ զգոյշ. իւր աչքերի, դէմքի, ձեռքերի շարժուածներից պիտի կիրք բղխէ. հանդիսատեսը նրա ամեն մի հայեացքից, քայլից, շարժումից պիտի հասկանայ նրա կեղծ բարեպաշտութիւնը, նրա զսպուած կրքերի ուժգնութիւնը. բայց մենք ինչ էինք տեսնում. մի վարդապետի շորով մարդ, կոպիտ ձևերով, շարժումներով. ոչ մի հոգեբանական խաղ, ոչ մի կեղծ բարեպաշտութիւն և ոչ էլ անզուսպ կրքեր. Տարտիւֆը մի դանդաղկոտ—մեռած մարդ էր երևում։

Ի հարկէ, երբ գլխաւոր դերը այսպէս անցաւ, էլ ինչ խօսենք միւսների մասին, որոնք ոչ մի կերպ չնպաստեցին խաղին. այդ բաւական չէ, այլ իրանց անտանելի խաղովը և դեր չիմանալովը միանգամայն փչացրեցին։

Ցանկալի բեմի վրայ կան տասից աւելի դերակատարներ, բայց տիրում է լռութիւն, լսվում է միայն յուշարարի միևնոյն խօսքերի կրկնութեան ձայնը. դերասանները այնքան անպատրաստ էին, որ չէին իմանում թէ յուշարարը ում դերըն է ասում. կամ պատահում էր որ երկու դերակատար յուշարարի միևնոյն խօսքերը միասին ասում էին և մեզ ծիծաղացնում։ Ինչով արդարացնել դերակատարների այդքան անտարբերութիւնը և անպարտաճանաչութիւնը. իրանք դերակատարները և թատրոնին մօտ անձինք մեղը ձգում են թատրոնական ղեկավարների վրայ, որ նրանք ուժերից վեր բան են պահանջում դերակատարներից. դերասանները խաղացել էին շաբաթ և կիրակի օրերը միմեանց վրայ, առանց հանգստանալու և յանկարծ մի այդպիսի դժուար պիես են առաջարկում խաղալ. անմիջապէս չորեքշաբթի օրը. դերակատարները յայտնում են, որ իրանք յոգնած են և թէ երկու օրում մի այդպիսի պիես խաղալ անհնարին է։

Թատրոնի ղեկավարները՝ զիջելի լինելով պահելու իրանց խօսքը առաջ տանելու համար, պահանջում են անպատճառ խաղալ, ասելով. «ով չի ուզում, կարող է խմբից դուրս գալ. մենք նրան ռոճիկ չենք տալ»։ Նոյն խօսքերը կրկնում են, երբ դերակատարներից մէկն ու մէկը իրան առաջարկած դերը չի ուզում խաղալ, առարկելով որ կամ իւր ամպլուային չէ պատկանում կամ թէ իւր ուժերից վեր է. իսկոյն «կամ խաղալ, կամ հեռանալ»։ Դա մի շատ գռեհիկ միջոց է այն մարդոց դէմ, որոնց օրուայ հացը կախուած է խաղալուց և եթէ նա հեռանայ, քաղցած կը մնայ. այդ լաւ իմանալով, մեր ղեկավարները, ամեն րոպէ դիմում են այդ միջոցին՝ իրանց իշխանութիւնը, մեծութիւնը ցոյց տալու համար. Ինչպէս փոքրի կայարանների ստարոստաները, երկար ժամանակ, անտառում, դաշտում մենակ մնալով, չեն իմանում ում վրայ բանեցնեն իրանց իշխանութիւնը և բարկութիւնը և երբ յանկարծ յայտնվում է մի ճանապարհորդ, որ շտապում է գնալ, մեր ստարոստան իւր բոլոր փառասիրական և իշխանական զգացումներին բաւականութիւն է տալիս. Նրա ձեռին է՝ իսկոյն ճանապարհ ձգել կամ օրերով պահել. Նա կարող է ձի տալ և չտալ. և անպատճառ ձի եղած ժամանակն էլ չի տալիս, սպասում է, որ դան իրան խնդրեն, իւր իշխանութիւնը և մեծութիւնը ճանաչեն։ Ճիշդ ստարոստաների նման են վարվում և մեր թատրոնական ղեկավարները դերասանների հետ. ամեն կերպ աշխատում են ցոյց տալ իրանց իշխանութիւնը, մեծութիւնը, կրկնելով, «կամ մեր պահանջը կատարել կամ հեռանալ»։ Այդպիսով նոքա և հներին են զայրացնում և սառցնում և միւս կողմից երբէք չեն կարող գրաւել նոր ույժեր, ոյ անշուշտ մեր մէջ կան. դրանով նրանք երկիւղ կըծնեցնեն նորերի մէջ։ Չենք ասում, թէ դերասանների ամեն մի չնչին կապրիզը կատարել, ոչ, զիջելի լինել և պարտաճանաչութիւն պիտի պահանջել, բայց ոչ այդ ձևով և ոչ ամեն մի դէպքում։

Նրա անտեղի պահանջները, կապրիզները և ինտրիգները, որոնք միշտ կարող են լինել՝ թողնել անհետևանք, պահանջել, որ յանձն առած պարտաւորութիւնները ճշդութեամբ կատարեն, բայց միւս կողմից յարգել և նոցա օրինաւոր պահանջները՝ օրինակ հիւանդ է և չէ կարող խաղալ, կամ դերը իւր ուժերից վեր է, կամ մի դեր իւր ամպլուային չէ պատկանում և մի ուրիշը աւելի լաւ կը խաղայ. այդպիսի պահանջների ժամանակ չէ կարելի ասել, «կամ խաղալ կամ հեռանալ». կամ երբ ամբողջ խումբը ասում է, որ այս ինչ պիէսը կարճ ժամանակում պատրաստել անկարող է, ույժ չունի, յոգնած է, ժամանակ չունի, մի՞թէ կարելի է բարձր կրկնել՝ կամ խաղալ կամ հեռանալ. ահա այդ սպառնալիքի հետեւանքն էր, որ Տարտիւֆը 2 օրում խաղացին և մի երկու ժամում թաղեցին։ Ստարոստա չպիտի լինել, պարոն ղեկավարներ, այլ թատրոնական գործ հասկացող և քաղաքավարի վարիչներ, որ չէ երևում ձեր մէջ։ Նախ՝ նրանից, որ մեր խմբի ուժերը չէք ճանաչում և «Տարտիւֆ» պիէսան առաջարկում նրան խաղալ. երկրորդ՝ մի այդպիսի պիէսա գնելուց յետոյ, ժամանակ չէք տալիս պատրաստուելու. երրորդ՝ կամ խաղալ և կամ հեռանալ—սպառնալիքներով էք խումբը կառավարում, որով հների սիրտն էք վիրաւորում և նորերի առաջը քար ձգում։

Մի քանի խօսք էլ դերասանների մասին. ոչ մի կերպ չի կարելի արդարացնել նոցա դեր չիմանալը. երկու ամբողջ օր, առաւօտից մինչև երեկոյ միթէ չի կարելի դերը սովորել այնչափ, որ բեմի վրայ ուրիշի խօսքերը չասել կամ յուշարարի կրկնած ժամանակ իմանալ, որ իւր դերն է և ոչ ուրիշինը. այդպէս չփոթուել կարող է խամը, նորը, բայց ոչ փորձառու դերասանը կամ պ. Պետրոսեանը. ժամանակի քչութեան պատճառով, թող դուք վատ խաղայիք, մենք այդ բանում ձեզ չէինք մեղադրիլ. բայց լուռ կանգնել կամ ուրիշի ահագին պարբերութիւնն ասել, ծուլութեան նշան է և ամօթ։

25 դեկտ. Ա. Բալայեան։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ Ն. ԿԱՐԱԿԱՇԻ ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆ

—

Մենք արդէն հրատարակել էինք հեռագիր հայ երիտասարդ ուսումնական պ. Կարակաշի հանքաբանութեան և երկրագիտութեան մագիստրոսութեան աստիճան ըստանալու մասին։

«Նով. Վրեմիա» լրագիրը հաղորդում է դեկտ. 21-ի Պետերբուրգի համալսարանում կայացած ուսումնական հանդիսի մասին, ուր պ. Կարակաշը պաշտպանել է «Կովկասեան լեռների հիւսիսային ըստորոտի կաւճային շերտերը և նրանց կենդանական աշխարհը» վերնագրով իւր դիսերտացիան։

Գ. Կարակաշը ծնուել է 1862 թ. և միջնակարգ ուսում ստացել Սիմֆերոպոլում։ 1883 թուին մտել է Պետերբուրգի համալսարանի բնագիտական բաժինը և աւարտելուց յետոյ մնացել է համալսարանում գիտնական ասպարէզի պատրաստուելու համար. 1889 թուից նշանակուել է համալսարանի երկրաբանական վարիչ և այդ պաշտօնը նա վարում է մինչև այժմ։

Մի քանի տարուայ ընթացքում, պ. Կարակաշը կատարել է բազմաթիւ երկրաբանական հետազօտութիւններ Ղրիմում և Կովկասում։ 1894 թուին նա ուղարկուած էր Արտասահման Ցիւրիխում կայացած VI միջազգային ժողովին մասնակցելու։ Իւր բազմաթիւ հետազօտութիւնների մասին պ. Կարակաշը գրել է մի քանի գիտնական աշխատութիւններ։

Ուսումնական հանդիսում պաշտօնական հակաճառողներ եղել են պրօֆ. Ինոստրանցեվը և Սօկօլովը։ Վիճաբանութիւններից յետոյ համալսարանի բնագիտական բաժինը յայտարարեց պ. Կարակաշին հանքաբանութեան մագիստրոս, որ հանդիսական ժողովուրդը ընդունեց բուռն ծափահարութիւններով։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՊԱՀԱՐՁԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐՈՒ ՎԱՃԱԿԸ

(«Բիւզանդիոն»)

—

Չինական առած մը, գեղեցիկ կըպատկերացնէ մեր բիւրաւոր պանդուխտներու հոգեբանական վիճակը։—«Հեռանայ աչքէ, օտարանայ սրտէ...» Այդպէս կըմըմըռան պանդուխտներու լքեալ կնիկներն, և այսպէս հանրային ուշադրութիւնը կըհրաւիրեն իրենց ողբալի կացութեան վրայ։ Ա՛, հակառակ չինական սովորական ամօթխածութեան՝ ղարիպներու կնիկները ազգին տան դուռը բաղխելով աղաղակ կ'բառնան, է—Ի՛ սէր Աստուծոյ, հերի՜ք եղաւ. մեր Ս. Եկեղեցիէն վերջ մը կ'խնդրենք այս լքեալ անվերջ վիճակին, էլ դիմանալ չենք կրնար, քանի որ մեր էրիկները չեն վերադառնար, մի՛ մեղադրէք, թողէք մեր գլխուն ճարը նայինք, ամօթ է ըսել՝ ամուսնանանք, ապրինք...»

Ասոնք այն կնիկներն են, որոնց այրերը քսանուհինգ տարիէ և առ նուազն տասը տարի է հետէ պանդխտած են, թողլով հոս իրենց կիներն ու զաւակներըն անմխիթար, մինակ, առանց նիւթական ու բարոյական օգնութեան։ Բիւրաւոր կնիկներ, այսպէս անտանելի վիճակի մէջ են, և երկա՛ր, շա՛տ երկար տարիներու հոգեկան ա՛յնքան տառապանքէ յետոյ՝—որ տեղի տուաւ և կուտայ բարոյական անհամար զեղծումներու, զեղծանելով և արատաւորելով հայ - ընտանեկան անբիծ կեանքը, լուս-հաւատքէ հանելով շատ մը կնիկ արմատներ—պանդուխտներու կանանց դասը, դատապարտուած է հակաբնական թշուառութեան մը, զոր այլևս, անտանելի կընկատեն։ «Այսօր չէ, վաղը» ըսելով հոգետանջ համբերութեամբ ակնպիշ ակնկալեցին, որպէս զի վերադառնան բարով խէրով՝ իրենց հետ կանաչ-կարմիր պատկով կապուած փեսաները։ Եկեղեցւոյ նըւիրապետութեանը սրտանց հնազանդ և իրենց մարդոց սիրոյն համար իրենց ծաղիկ կեանքը զոհ տուին անտրտունջ և անմռունչ։ Անոնք կ'ապրէին այս վիճակին մէջ, քանի որ ապրիլ հնարաւոր էր. սակայն դժբաղդաբար էրիկներէն լքուելով, ու գլորելով հասան այն անդունդին, ամուսնական այն զարհուրելի թշուառութեան, յորում՝ այս հալով էլ ապրիլ չեն կրնար։ Վասնզի, ինչպէս կրնայ ապրիլ կնիկ արմատ մը, կամ մատղաշ տխմարներու խումբ մը, երբ երեսէ ձգուած, մինակ մնացած են, չունին աշխատաւոր ձեռքեր, արհեստ կամ դրամ, և ոչ երբէք նկամուտ, երբ անօթի են, առանց պատառ մը սև հացի, մերկ են, առանց գըլուխ՝ առանց կեղտոտ սփածանելիքի մը, անտուն, անպատսպար, փողոցներու վրայ անպաշտպան թողուած ամեն հովերու, ամեն փորձանքներու դէմ, որք դարանակալ օձի նման կ'սպասեն իրենց... արդ, այս ձահելի աղքատութեան մէջ՝ չեն կրնար ապրիլ։

Ուստի իրաւամբ կ'պահանջեն ապահարզան և ամուսնութիւն։ Ինչ մխիթարութիւն կրնայ տալ Եկեղեցին, կամ ինչ յուսադրութիւն։ Կըմերժէ բացարձակապէս ապահարզան խնդրողներն, որք յուսահատ կ'դառնան, և յուսահատները՝ չկրնալով կշռել փորձանքին հետեւութիւնը, կ'իյնան, կ'գլորին կ'կորսին բարոյապէս։ Ինչ ընենք, խնայենք թէ մեղադրենք։ Դժբախտաբար միայն խօսելով գրելով ու ցաւակցելով թեթևացում մը չենք բերեր լքեալներու անօթի և խղճուկ վիճակին. խօսքով միայն չեն ապրիր, այլ հացով... հետևաբար լուրջ և գործական ձեռնարկութիւններ հարկաւոր են դարման մը տանելու պանդխտութեան և լքեալ կանանց ու աղոց կացութեան։ Պանդխտութեան այս աղէտն երթալով կ'ծանրանայ, և եթէ թողուի այսպէս իր բախտին, շատ տխուր հետեւանքներու ականատես պիտի ըլլանք։ Աւելի կ'ներկայանայ յիշելու ապահարզանի յանդուգն ու տխուր փորձ մը, որ առաջին անգամ կ'լսուի չինական միջավայրերու մէջ։ Գուլպարիոյ Բուլանըգ քաղաքը պանդխտեալ Մշոյ Աւրան գեղացի Նազարէթ Աւետիսեան անուն մէկը տարւոյս օգս. 20 թըւականի գիր մ'ուղղելով իր կնոջ (Մուշ-Աւրան) կ'ըսէ. «ասկից վերջ ու տուն կ'ճանչնամ, ոչ ընտանիք. էլ ես չեմ գար, թող ինձի չսպասէ, թող հերթայ իր գլխուն ճարը նայի, իր երեսի վրայ թող չմնայ...» Իսկ խեղճ կինն իր պաշտպան-գեղջուկ քահանային միջոցաւ կ'պատասխանէ։—«Կնկանդ վրայ շապիկ մը չկայ, որ գիր մերկութիւն ծածկէ ցրտու և տաքութեան դէմ, մենք մեր աչքի վրայ խալտտ տեսեր ենք, հարսի վրայ երբէք. ինչ Աստուած կ'պաշտես. փոխանակ անոր սրտին մխիթարանք տալու, կ'ներես այսպէս անամօթ բաներ կըգրես». ևն։

Ահա իրաց կացութեան տխուր հետևանքներէն մէկը։ Ի՛նչ գժբախտութիւն հայ կնոջ մը համար, սպասել 15—25 տարի, կեանքը չորցնել իր ամուսնոյն, տան սիրոյն դարձին յուսովն, և այսքան զոհաբերութենէ յետոյ, զրկուիլ, բաժնուիլ սիրելիէն, մէկն օտար երկիրներ կորսուելու և միւսը տան օճախին քովը չքանալու համար։ Երևակայեցէք, ինչ դառնագոյն կորուստ։ Եւ միթէ, այս սրտակտոր ու տնաքանդ կորուստը չանենալու համար չէ, որ հայ չինական կինն ու հարսնուկը սևաւորուկ, սգաւորուկ յանձն առած են ու կ'կրեն թշուառութիւնը։ Այս ծանրակշիռ խնդրոյն վրայ պարտք կըհամարինք հրաւիրել Ազգ. Պատրիարքարանի կարեկցութիւնն, և հայ մամուլի ուշադրութիւնն։

Մուշ։ Գեղամ։

ԽԱՐԲԵՐԴ. շաբաթուս մէջ՝ կիրակիէն սկսած՝ Հայ-բողոքական շըրջանակներն «հոգևոր արթնութեան» համար ժողովներ կ'ըլլան նախագահութեամբ Նորեկ Անգլիացիի մը՝ Մր. Միլլըրգի, որ շրջիկ միսիոնարի պաշտօնով ամէն տեղ պտըտելու ու քարոզելու գործ մը կ'թուի կատարել։ Քուէյքը մէ կ'ըսուի. այս ճամբորդութիւնով հանդիպած տեղերուն կարօտելոց վիճակն ալ անտես չըներ։

97 աժան տարի մը կ'վերջանայ, ժողովուրդին էն կարևոր սնունդը կազմող ցորենն, հիմակ իսկ քիլէն 28—30 ղրշ.-ի վրայ՝ առնող չըբինար։ Ուրիշ տարիներում ցորենը մանաւանդ, երբ 40—50 ալ ծախուէր, ամէնէն յետին տնուորն երկու - երեք տարիներու համար պէտք եղածը մէկ անգամէն կըվերցնէր հրապարակէն։ Հիմա սուղ բանը դրամն է, եթէ չկրնայինք ուրիշ մալ ըսել, այնքան սուղ ու փնտռուածը։

Տարուան մէջ մարդասիրաց կողմէ եղած տուչութիւնով մը մօտաւորապէս 700 տուներ չինուեցան դաշտին մէջ։ Հազար հինգ հարիւր ոսկիով 700 տուն. կըն յէք երևակայել որ արհեստական խրճիթներու նմանող պարզ, միայարկ ու միաբաժին շէնքեր են այդ եղածները, որ հազիւ կրնան պատսպարել ընտանիքի անձիւրն ու դուարներն ամբողջութեամբ։ Գիւղացիք շատ մը տեղեր առհասարակ

ջանում է բարեմաղթութիւններով «Աստուած հազար բարիք տայ ըստծիս փոխարէն»։

Սակայն մենք ասացինք որ նոյն իսկ դարաւոր սովորութիւն կրող ազգերի մէջ կարող է դարէ ի դար երևալ հումօրիստ և մեր դարում Պօլսոյ հայկական կեանքը տուել է մի հումօրիստ միայն, այն է Պարոնեան, որ մօտենում է եւրոպական հումօրիստների մօլիէրական տիպին, թէև դեռ ոչ բոլորովին ազատուած ասիական մտավախութիւնից, ճնշումից։ Պարոնեանն այն վշտերի հանճարն է, որի մասին խօսեցինք յօդուածիս սկզբում։

Եւ երբ գրականութեան մէջ այսպիսի սովորութիւն և մտավախութիւն է երևում, ուզում էք որ միևնոյն ժամանակ, մեր մէջ հումօրիստներն ամեն տարի ծնուեն։ Ո՛չ, այդ անհնարին է։

Սակայն նշոյլներն երևում են և այդ նշոյլներն ուշադրութեան արժանի են ու խոստովանվում ենք, որ այդ նշոյլներն առիթ տուին ներկայ յօդուածիս։

«Կեանքի տեսարաններ» վերնագրով մի գիրք է ընծայուած նորերս հայ ընթերցող դասակարգին. գրքի հեղինակն է կեղծանուն կրող Քասիմ, պօլսեցի. հրատարակիչն է «Թիֆլիզի հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը», որ հայերին շատ էլ երես չէ տալիս որևէ բովանդակութիւն ունեցող գիրք հրատարակելով։

Խոստովանութիւններ կային մինչև այդ գրքի լոյս տեսնելը դանազան շրջաններում, իբր թէ մի նոր Պարոնեան է հրապարակ գալիս։ Ի հարկէ շատ ցանկալի կըլինէր որ կատարուէր այդ. բայց հանգիստ թողնենք Պարոնեանին, չվիրաւորենք նրան, հաւատացնելով ընթերցողին որ պ. «Քասիմը» բաւական ընդունակ գրող է, բայց արժանի չէ մինչև անգամ Պարոնեանի կօշիկների կապը քանդելու։ Պ. Քասիմն իւր գիրքն անուանել է «կեանքի տեսարաններ», մենք էլ այդպէս կանուանենք, որովհետև այդ անունն աւելի համեստ է, քան նրան Պարոնեանի գրուածներին նմանեցնել։ 20 հատ տեսարաններ են ամփոփուած 270 փոքրադիր երեսներում և երբ այդ քանից առաջին ութը կարդում էք և հասնում ինններորդին, այնուհետև մնացած տասներկուսը կարդում էք իբրև տոկոս այն ութ «տեսարաններ»ի, որոնք ձեր մտքին և սրտին ճշմարիտ մի նիւթ տուել են և գիրքը վերջացնում էք տխուր տրամադրութեան մէջ. լաւ է սկսուած և վատ վերջացրած։ Ամբողջ գրքի մէջ իբրև անհատնելի թել անցնում է թաքնուած մտավախութիւնը, որի աղբիւրն արդէն ծանօթ է ընթերցողին մեր վերևի խօսքերից։ Բայց թողնենք այդ բոլորը և թողնենք անկեղծօրէն։ Մեր գրականութիւնը այժմ, մանաւանդ այժմ, այնքան ամլացել է, այնքան հազուագիւտ են նրա մէջ լաւ երևոյթներ, որ մենք պատրաստ ենք աստղը արեգակի տեղ ընդունել։ Թող լինի. թող մի երես լինի, բայց լինի այն որ գրականութեան մէջ անուանվում է «յաւիտենական երես» և այդ յաւիտենական երեսները կան պ. Քասիմի հեղինակութեան մէջ։

Հեղինակը ցանկացել է համեստութիւն անել, նա ծածկուել է Քասիմ կեղծ անուան տակ։ Եթէ ընդունենք որ կեղծանուններն էլ որոշ նշանակութիւն պիտի ունենան, կըտեսնենք որ այդ կեղծանուան մէջ կայ փասեանի միամտութիւն, բայց և ո՛չ մի սրամտութիւն. փասեանը գլուխը կոխում է ձիւնի մէջ և ոտքերը բարձրացնում է և երջանիկ է այն համոզմունքով, թէ իրան ոչ ոք չէ տեսնում. պարոն Քասիմն էլ այդպէս է արել։ Եթէ չէք հաւատում, Քասիմ բառը հակառակ, այսինքն վերջից դէպի սկիզբը կարդացէք և պ. Միսաքը կըտայ ձեզ իւր այցետոմսը։ Թող չբարկանայ ինձ վրայ յարգելի հեղինակն ինձ մեղադրելով թէ ձգտումն ունիմ քանդել նրա կեղծանունը։ Ես նրան չեմ էլ ճանաչում, այլ այս տողերը անհրաժեշտ էին միայն հեղինակի «սրամտութեան» կերպը բնորոշելու համար։ Ահա եթէ այդ տեսակ «սրամտութիւնից» նա ազատէր իւր ոգին և քանդէր այդ ոգին կաշկանդող կապերը, նա անշուշտ ընթերցողի վրայ աւելի մեծ ազդեցութիւն կարող էր ունենալ, որովհետև գրել գիտէ և մտածել։

«Կեանքի տեսարանների» մէջ ամենայն հաճութեամբ կարդացվում են «Խաբուած մարդ մը» «Վաճառականներուն ճանճը», Թէ ինչու ամեն փեսացու անկեղծ չէ», «Մեր վարժապետը», «Ուտէնկօտիս պատմութիւնը» և «Թէ ինչու կը սիրեմ Փօլին և ո՛չ Միլլին» ու «Շուարած հայր մը եւրոպական քաղաքակրթութեան առաջն»։ Մնացեալների համար արդէն վերևը ասացինք թէ ընթեռնուլ դրանց, կընշանակէ հեղինակին տոկոսվճարել այդ 8 տեսարանների փոխարէն։

Բայց թողնենք որ հեղինակը խօսի և նրա գեղեցիկ ու իսկական հումօր բովանդակող մի քանի տեսարաններից վերցընենք մէկը, որ աւելի յաջողուած է. այն է «Շուարած հայր մը, եւրոպական քաղաքակրթութեան առաջեւ»։ Հայրը «անքաղաքակիրթ» է, իսկ աղջիկն ու տղան «քաղաքակրթուած» և ահա այդ շուարած հայրն ասում է որդու վերաբերմամբ։

«Իմ ու տղուս մէջ հազիւ քսանըհինգ տարուայ տարբերութիւն մը կայ... Երբ ես տղայ էի՝ տանուանը արթնանալուս պէս ինքնիրենս կըհագնուէի, երեսս կըլուայի ու եկեղեցի կը վազէի փոխ ըսելու. իսկ տղաս արթննալուն պէս սպասուհի կըփնտռէ...որ զինք հագուեցնէ, կաթով սուրճը բերէ և կօշիկները սրբէ, առանց մտքէն իսկ անցնելու թէ եկեղեցի երթալ կայ։ Ես պզտիկ եղած ժամանակս ժամ կըշտկէի, տղաս կիրակի օրերը թատրոն կըշտէ, ներկայացում կըտայ։ Ես գոց գիտէի եկեղեցական երգեցողութիւններու մեծ մասը, տղաս շատէ շիտակ հայր մեր մ'իսկ չգիտեր։ Ես շարական կըերգէի, տղաս օպերա կըմըլտայ, ես ծեր մը տեսած ատենս ձեռքը կըհամբուրէի, տղաս ծեր մը տեսնելուն պէս ծաղրել կուզէ. ես ձեռք մը լաթը (զգեստ) երկու տարի կըհագնէի, տղաս տարին չորս ձեռք լաթ կ'ուզէ. ես հօրս հինները կըհագնէի, իսկ տղաս կուզէ որ իւր հինները ես հագնիմ. ես սուրճ խմելն ամօթ կըհամարէի, տղաս գարեջուր կըխմէ. ես գրտառի կըշխատէի, տղաս Գաղիէրենի կըպտրտի. ես մէկը փոխարինելու համար սիրելիս կըսէի, տղաս մի՛ն շէռ կըսէ, ես պարոն էի, տղաս միսիւ է. ես շուկան ճաշելը շուայլութիւն կսեպէի, տղաս կիրակէ օրերըն իսկ դուրսը կը ճաշէ։ Վերջապէս, ինչ որ էի ես, տղաս բոլորովին իմ հակապատկերը կը կազմէ ու ես հիմայ շուարած մնացած եմ թէ մեզմէ որուն ուղղութիւնը շիտակ է»։

Եւ շուարած հայրը բացագանչում է։

«Մեր երկուքէն մէկը հայ չենք, կամ ես, կամ տղաս»։

Ահա և «շուարած մարդու» կինը.

«Մայրս երեսը խաչակնքելով՝ օրօրան կը դնէր զաւակները, կինս խաչակնքելուն վրայ գաղափար իսկ չ'ունի։ Մայրս հինգ տաղաւարին կը խօստովանէր, կինս տաղաւարը ամարանոցին մէջ չինել կ'ուզէ տակը զբօսնելու համար. մայրս հօրս հետ պատկառանքով կը խօսէր, կինս իմ վրայ իշխանաբար կըհրամայէ. մայրս զաւակներուն վրայ հոգի կուտար, կինս զաւակները խոչնդոտ մը կը նկատէ իր հանգստութեան. մայրս տղաբերքի ժամանակ Աստուածածնա՛յը կը գոչէր, կինս մանկաբարձ մը. մանկաբարձ մը կը պօռայ. մայրս բնաւ չէր հիւանդանար, կինս ժամանակին մեծագոյն մասը բժիշկներուն նուիրած է. մայրս տնական աշխատութիւնները անձամբ կը կատարէր, կինս երկու սպասուհիով գոհ չըլլար. մօրս տունը կանոնաւորութիւնով կը փայլէր, կնոջս տունը գլուխն առեր կերթայ. մայրս մեր տան պահապան հրեշտակն էր, կինս իմ գլխուս փորձանքն է»։

Ահա և շուարած մարդու աղջիկը.

«Անցեալ օր աղջիկս շրջանաւարտի վկայականն առած՝ տուն եկաւ դպրոցէն, և ձեռքն ինձ երկնցուց, որ համբուրեմ. „ինչո՞ւ, աղջիկս։ ըսի, պէտք չէ որ դուն իմ ձեռքս համբուրես", «Ո՛չ, հայրիկ, պատասխանեց. եւրոպական քաղաքակրթութիւնը կըպահանջէ, որ այր մարդիկ կիներու ձեռքն համբուրեն. գրականութիւնով չես զբաղիր, որ գիտնաս թէ կայսրներն իսկ կիներու ձեռք կըհամբուրեն. ու ես, ծիծաղելի չըդառնալու համար, ամենայն երկիւղածութիւնով համբուրեցի աղջկանս ձեռուըները, շնորհակալ ըլլալով միանգամայն, որ եւրոպական քաղաքակրթութիւնը այնչափ խստապահանջ չէ. ինչ պիտի ընէի, եթէ փոխանակ ձեռքերուն՝ ելլէր ոտքերը համբուրելս պահանջէր»։

Հիմա մեր տունը եւրոպական քաղաքակրթութեան տիպար մը կրնայ համարուիլ ամեն տեսակներով. մենակ ես եմ, որ ֆրանքօ-հայկական գիրքերու պարեա մը դարձած եմ մեր ընտանեաց մէջ»։

Ահա այս է այն յաւիտենական երեսներից մին, որ ճշմարիտ հումօր է բովանդակում կեանքի տեսարանների մէջ։ Մենք առաջ բերինք միայն մի նըմուշ և եթէ չենք սխալվում, ամենայաջողուածը։

Սակայն ընթերցողը թող ների, որ շատ երկարացաւ այս անգամ իմ գրական զրոյցս. այդ անհրաժեշտ էր՝ ապակիները ադամանդներից զանազանելու համար։ Մեր գրականութիւնն, ինչպէս ասացինք, ամլութեան ժամանակաւոր շրջանի մէջ է և եթէ այդ շրջանում նոյն իսկ «Կեանքի տեսարանների» նման» մի գիրք է լոյս տեսնում տարուան վերջին, այդ էլ մխիթարական է։

Մ. Հախումեան։

յարդանոց չունենալով՝ հատեղէնները պարտկելէ յետոյ յարդը կ - լոտաեղին թողին։

ՀԱՑ-ԳԻՒՂ (Պանտրմա) Պալըքսէրը Պանտրմայի առաջնորդական վիճակը կըկազմեն Պալըքսէրը՝ 500 տուն, Պանտրմա՝ 800, Միխալըճ՝ 200, Քիւրմաղի՝ 200, Էմինճիք՝ 250, Հայ-Գիւղ՝ 180, Պիլաչէհիր՝ 50, համագումար 2180 տուն հայ ժողովուրդ։

Ամբողջ վիճակայինք ոչ-հայախօս են. բացառութիւն են միայն Պանտրմացիք, որոց փոքր մի մասը պիտէ զուտ հայերէն, իսկ մեծ մասը ազաւաղեալ հայերէն մը կը խօսի։ Պանտրմացիք ունենալով հանդերձ գործելու ընդունակ և կարող անձնաւորութիւններ, անտարբեր կըմնան կրթական գործերու նկատմամբ։ Երբեմն ալ յանկարծ կըսթափին, կըթօթափեն իրենց անտարբերութիւնը, կըփարին գործին, բայց վազանցիկ է այդ, յարատեւութեան և ձեռներէցութեան ոգին կըպակսի, այս պատճառաւ վարժարանը չարունական փայլուն շրջան չէ բոլորած. այդ կարճատև ոգևորութեանց արգասիքներն են, որ կ'երևին քիչ շատ։ Վարժարանն ունի մօտ 350 ոսկւոյ տարեկան եկամուտ մը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Սրանից մօտ մի ամիս առաջ «Մշակի» Պարսկաստանի թղթակիցը մի այնպիսի ցնցող, ազմկալից տեղեկութիւն տուաւ այդ երկրի մասին, որ կարծես թէ յեղափոխութիւն էր սկսել, որ հայերին և հրէաներին ալիտի կոտորեն, որ շուտով մի քաղաքական խառնուածիւն է ծագելու հալէն։ Այժմ երևի Թերմանիայի հայ ուսանողներից մէկը, թարգմանելով «Մշակից» այդ կտորը, հաղորդել է գերմանական «Post» լրագրին, որ իր կողմից, տպելուց յետոյ բոլորը, չէ երաշխաւորում լուրի ճշդութեան մասին։ Եւ լաւ էլ է արել, որովհետև «Մշակի» թղթակցի հաղորդածների մէջ ճշմարտութեան նշոյլ անգամ չըկայ։ «Արձագանքի» թղթակիցը Թէհրանից հաղորդել էր, որ նոր սադրամ է նշանակուել Էմինը-Թօվլէն, իսկ մենք տեղեկութիւն ունենք, որ առ այժմ Պարսկաստանում ամեն ինչ խաղաղ է և հողևորականութեան չանքերը խռովութիւն սերմանելու— անյաջող հետևանք են ունենում։

Այդ միևնոյնը հերքելով «Post»ի (ի հարկէ և «Մշակի») հաղորդածները, Պետերբուրգի պարսից դեսպանը ուղղել է «Նօվ. Վր.» թերթին մի հերքում։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐԵՏԷ.—Կ. Պօլսում դեսպանները վերջացրել են իրանց խորհուրդը Կրետէի ինքնավարութեան մասին։ Մնում են միայն մի քանի երկրորդական հարցեր։

«Մակայն առ այժմ ոչինչ դրական և հանգստացնող բան չէ կարելի հաղորդել գժբաղդ կղզու մասին - ասում է «Voss. Zeit.» թերթը— որովհետև մինչև այժմ յայտնի չէ թէ պետութիւնները համաձայնութեան եկան այն մասին թէ հարկաւոր է ժամանակաւոր նահանգապետ նշանակել թէ մշտական։ Նոյնպէս յայտնի չէ թիւրքը զօրքաց Կրետէից հեռացնելու մասին։ Վերջին հարցը շատ կարևոր է, որովհետև նրանից է կախուած խաղաղութեան յաջողութիւնը։

Կրէտական ազգային խորհուրդը պատգամաւորներ է ուղարկել պետութիւնների ներկայացուցիչներին, յայտնելով որ ապստամբները միայն այն պայմանով կ'օգնեն ապագայ նահանգապետի գործունէութեանը, եթէ թիւրք զօրքերը հեռացուին կղզուց։ Եթէ—ասում է թերթը—պետութիւնները չհամաձայնուին ընդունել այդ պահանջը, այն ժամանակ ապագայ նահանգապետը — ժամանակաւոր լինի նա թէ մշտական— միշտ կըռուի մէջ կըլինի ապստամբների և կղզու ամբողջ ազգաբնակութեան հետ և այդ նա չէ կարող անել։ Միջազգային ժանգաբմերքիան դեռ չէ կազմուել և բացի դրանից, թէ կազմուի էլ, այդ մի քանի հազար մարդիկ ինչ կարող են անել ամբողջ ազգաբնակութեան դէմ։ Եւ այսպէս, պետութիւններին մնում է համաձայնուել և կղզին մաքրել թիւրք զօրքերից։ Նահանգապետի հարցն էլ դեռ չէ վճռուած։ Ձիշտ է, լուր կը պատում որ պետութիւնները համաձայնուել են նշանակել Բօժէ Պետրովիչին, բայց այդ 66 տարեկան ծերուկը չէ որ ալիտի հարկադրուի չուտով նոր քաշուել և տեղի տալ մշտական մի նահանգապետի, որի մասին դեռ ևս ոչ մի եղբակացութեան չեն եկել։ Ռուսաստանը վաղուց ի վեր աշխատում է մի յունադաւան նահանգապետ նշանակել տալ, բայց թէ դրա հետ համաձայն են միւս պետութիւնները—յայտնի չէ։ Լօնդոնում ենթադրում են որ Ռուսիան մտադիր է այժմ Կրետէի նահանգապետութեան թեկնածու առաջարկել յունական իշխան Գէորգին։

— «Times»-ի թղթակիցը Կ. Պօլսից հաղորդում է, որ Բօժէ Պետրովիչի թեկնածութիւնը Կրետէի նահապետութեան՝ թողուած է վերջնականապէս և որ դեսպանական խորհրդի վերջին նիստում ռուսական դեսպանը առաջարկեց յունական Գէորգ իշխանին։ Այդ առաջարկը շատ զարմացրեց դեսպաններին և սառն ընդունելութիւն գտաւ, բայց դեսպանները վճռեցին հրահանգ խնդրել իրանց պետութիւններից այդ մասին։

ՀԻՆԱՍՏԱՆ,—«Նովոստի» լրագրին հաղորդում են որ Մաթկիզ Սօլզբիւրիին յայտարարից թէ 2ինաստանում պատահած վերջին դէպքերը ոչ մի բարդութիւն առաջ չբերին։

Ամերիկական դեսպանը Լօնդոնում յայտարարեց որ Ամերիկան կատարեալ չեզոք կըմնայ Թաղաղական ովկիանոսում պատահած դէպքերի համար։

—«Figaro»-ին հեռագրում են Լօնդոնից որ անգլիական նաւատորմղի 20 նաւերը զբաւեցին պօրտ-Համիլտոնը. բայց դա ոչ մի օգուտ չի բերել Անգլիային և անշուշտ նա շուտով կըզրաւի մի ուրիշ չինական նաւահանգիստ։

—«Figaro»-ին հեռագրում են Լօնդոնից.

«Անգլիան շատ գայրացած է 2ինաստանում կատարուող դէպքերի առիթով. լորդ Սօլզբիւրիին պէտք է գործի փութով և անգլիական շահերը պահանջում են այդ. բացի դրանից խնդիրը կարևոր է և այն տեսակէտից, որ լորդ Սօլզբիւրիի արտաքին քաղաքականութիւնը մեծ հարուած ստացաւ այս վերջերս։

Դրա համար, քաղաքական շրջաններում սպասում են լորդ Սօլզբիւրիի մի ցնցող գործողութեան։ Ամենահարց ժամանակում Անգլիան կըզրաւի որևէ պատեհագոյական կէտ։ Դա Տալիէնվալը չի լինել, այլ 2ինաստանի հարաւային ծայրերից մէկը, պահպանելու համար Հօնկօնգ-Ջանխայան գիծը և կըտրելու համար գերմանական նոր Բրինի-Կիաօ-2էու գիծը։

ԱՒՍՏՐԻԱ.—Վիեննայից հեռագրում են «Նօվօստի» լրագրին, որ դեկտ. 19 (31)-ին հրատարակուեց կայսերական կարգադրութիւնը աւստրօ-հունգարական հաշտաձայնութիւնը երկարաձգել այլ ևս մինչև մի տարի։

—Նոյն լրագրի թղթակիցը առաջ է բերում պաշտօնական «Framdenblatt» թերթի հետևեալ խօսքերը։

«Հաստատում ենք, որ Եւրոպան մտադիր է պահպանել խաղաղութիւնը և Աւստրիան ու Ռուսիան բարեկամ են և պայմանաւորուած՝ պահպանելու Բալկանեան պետութիւնների անկախութիւնը»։

Ազնուհան թերթը խորհուրդ է տալիս սուլթանին՝ սկսել բարեփոխութիւնները։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱՐՏԱՒԱԶԴ ՇԱՀԱԶԻԶԱՆԵԱՆՑԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՒԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի աթաղի տանդէզ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱԹԱՌՕՏՆԵՐ

Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռական հ.

Կ. Մ. ՀԻԿՈՂԱՆ—9—10 ժ. աչքի, նեըքին և նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԹՈՒՐԴԵՆԿՈ—10½—11½ ժ. կանանց և երեխայոց։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—11½—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ատամների, կոկորդի. քթի և կծքի հ.

Ա. Պ. ԿՈՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. նեըքին և երեխայոց հ.

Ա. Ֆ. ԳՈՒՐԿՈ.—1½—2½ ժ. նեըքին և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՒՆԵՐ՝

Ա. Մ. ՓՈՂՊԻՆԵԱՆ—5—6 ժ. նեըքին երեխայոց հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—6½։

Ա. Ն. ՉՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (հիպերաեսթեզիա), վեներական և մաքսի հ.

Տ. Ի. ԲՈՒՐԴԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազոտութիւն է անում մէզի, խեի, արեան, կաթի համար։

Վճար 50 կ. հիւանդները ծրի։ համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ· ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈՍՕՎԻ

(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐՊԵՆԿՈՅԻ)

Սօլօլակ, Դանովսկայա փողոց № 3,

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈՍՕՎ, ժամը 10—12 միզային օրգանների վիներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Մ. Ա. ՉԱՆԵՎՍԿԻ, ժամը 1—2 վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ օրերը)։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Կ. Ե. ԿԱՐՊՈՎԻՉ, 12—1 մանկաբարձական և կանանց հիւանդութեանց, (երեքշ. հինգշ. և շաբաթ օրերը)։

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, նեըքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն։

Մ. Լ. ԲՆՅԿԼԵՎՍԿԻՑ 12—1. ակռաջկ, քթի, կոկորդի, և վիրաբուժական հիւանդութեանց։

Մ. Բ ԴՐԵՑՑԻՆՑԵՐ 12½—1½, մասամբ և բժշկական մաթմնաագութիւն, բժիշկների որոշմամբ (երկուշ. չորեք. ուրբաթ) վճար փոխադարձ համաձայնութեամբ։

Ի. Ի. ԱՒՏՍԻՆԵԱՆ, ժամը 12—1, մանկարձական և կանանց հիւանդութեանց

Գ. Ա. ՔՈՉԱՐԵԱՆՑ ժամը 11—12, կաշուի. վեներական, սիֆիլիսի և մզային օրգանների հիւանդութեանց ե-թերը. հինգշ. և շաբաթ)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը, 1—2 ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (երեքշ. չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Առանձնաւոր Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆԵՐ, ժամը 11—12, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԻՆՑ, գեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիոլոգիական հետազոտութիւններ է կատարում — հետազոտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի կալի։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասաժի և օգնարուժական։

Խորհրդի համար վճարը **50 կ.**

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անպամահատութեան մասաժի, մշտական մահճակալի, եւիքարականութեան, լոզարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիզ օրական 4 ժամին և 1 րոպ. Թիֆլիզ է հասնում առաւօտեան 8 ժամ 30 րոպ։ Դուրս է գնում Թիֆլիզից դէպի Բաքու առաւօտեան 9 ժամ և 15 րոպ. Բաքու է հասնում երեկոյեան 8 ժամ և 48 րոպ.

Մարդատար № 9 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիզ գիշերուայ 12 ժամ և 6 րոպ. Թիֆլիզ է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 րոպ. Դուրս է գնում Թիֆլիզից դէպի Բաքու երեկոյեան 7 ժամ 55 րոպ. Բաքու է հասնում առաւօտեան 8 ժամ 45 րոպ.։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս Բաքուից դէպի Թիֆլիզ առաւօտեան 7 ժամ 45 րոպ. Թիֆլիզ է հասնում երեկոյեան 8 ժամ 34 րոպ.։ Թիֆլիզից դէպի Բագու է դուրս գնում երեկոյեան 9 ժամ 34 րոպ. և Բագու է հասնում օրուայ 1 ժամ 2 րոպ.։

Մարդատար № 4 գնացքը Բաքուից գուրս է գալիս դէպի Թիֆլիզ երեկոյեան 8 ժամ 35 րոպ. Թիֆլիզ է հասնում առաւօտեան 9 ժամ 11 րոպ. Թիֆլիզից գուրս է գալիս դէպի Բագու առաւօտեան 11 ժամին և Բագու է հասնում առաւօտեան 6 ժամին.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքային վարչութիւնը հրատարակում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՍՊԱՆԴԱՆՈՑԸ փակ կըլինի յունվարի 1-ից մինչև յունվարի 6-ը և այդ ժամանակամիջոցում այնտեղ անասուններ չեն մահացուիլ։
(2—2)

Լոյս տեսաւ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՑ

(Տասներորդ տարի)

Գինը փոխանակ 60-ի 50 կոպէկ։

Դիմել՝ հրատարակիչ

Գիւտ ա. ք. Աղանեանցին։

ԲԱՑՈՒԱԾ Է **1898** Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XVI ԱՂԲԻՒՐ XVI IX ՏԱՐԱՋ IX

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար։

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար։

Կըհրատարակուէն նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ։

Առաջիկայ 1898 թ. կըհրատարակուէն «Տարազում» Էմիլ Զօլայի նշանաւոր ՊԱՐԻԶ վէպը, որոնց թէւմն և չատ մեծ վէպեր, բադրատ բուրժուազիայի, գործարանական և Բալախանի ՍԵՒ ՔՂԱՔ գործաւորների կեանքից։

«Բ. Դռան գաղտնիքը» վէպ, Կ. Պօլսի սուլթանների կեանքից։

«Աղբիւրի մէջ կըտպագրուէն ԼԻՕՆ ԿՈՒՐՕ հրահանգիչ-դաստիարակիչ մանկական վէպը և մի շարք պատմական պօէմաներ. Ինտրիտական բաժինը Աղբիւրի $^1/_3$-ական մասը կըկազմէ։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ռուբ.։ Պաշկերները բացառապէս պատրաստուում են Եւրոպայում։ **Ա լ բ օ մ պրեմիայով 4 ռ.** (արտասահման 5 ռ. կամ 12 ֆր.), **Մ այ ր ա կ ան բ ա խ ա պրեմիայով 7 ռ.** (արտասահման 10 ռ. կամ 30 ֆր.)։ **ՏԱՐԱՋԻ** տարեկան գինը **6 ռուբլի**։

Գրէմիաները ստանում են տարեկան բաժանորդագինը յիսովին վճարելուց յետոյ։

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Тараз կամ Tiflis, (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Խմբագիր-հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԵՋՏԵՐԵՆՑ։

Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie“

Ֆրանսական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կըլինի ՄԱՐՍԼԻԱՅԻ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի $^{25}/_{6}$-ի չորեքշաբթիից, ի

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԼԵԱՆ՝ ՏՐԱՊԵԶՈՒՆԻ, ՏԱՄԱՍԿԻ ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Միևնոյն է Բաթումից չորեքշաբթի, 24 դեկ. 5 յունվ. ՄԻՆՈՒՐԻԼԻ շոգենաւը
նաւապետ է ՉԵԼՏԻ,

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երկու. 4 ժամին Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան առժամանակները, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին ամեն տեսակ տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին
Բաթում և Ս.—Վիկտոր դ'Ասթոյին, Նաւերևիժեայս։
Թիֆլիս և Ս.—Գ. Օ. Ֆ. Բարեկենդանեանին, Սիոնի փողոց, նախկին Աւժրուտու բարվանսարայ։
Բաքու և Ս.—Ֆ. Ս. Դիլլարեանին, Գալիւբեկովի հրապարակ։
Նավօրօթեան և Ս.—Պ. Մելխիօր Հերշինօղլուին։ (20—8)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՕՐ“

Բարեբաղդաբար Հաստատուած 1872 թուին Մոսկուայում
թիֆլիզի գլխաւոր գործակալութիւնն ընդունում է

ԿԵՍԱՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ անշարժ և շարժական կայքերի

ԿԵՍԱՐԻՑ ԵՒ ԳՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

առանձին ձեռնտու պայմաններով, պատասխանատու աշխատանքի անընդհատ պահանջ դէպքում. ապահովագրուողները մասնակից են ընկերութեան օգուտներին։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԷՊՔԵՐԻՑ

ծառայողների և գործարանական բանուորների և մասնաւոր անձանց ապահովագրութիւն։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ծովով, գետերով և ցամաքային ճանապարհներով. ապահովագրութիւն շոգենաւերի և նաւերի։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունւում են և ամեն տեսակ տեղեկութիւններ և բացատրութիւններ հաղորդւում են ընկերութեան գլխաւոր գործակալ ԱԼԻՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ՍԵՐԳԵԵՎԻ գրասենեակում. Նախկին Տրապարակի վրայ, տան իշխ. Ցիցիանովի, № 2.

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ 2ինարկի ատամական և գործարն. հաշուապահութեան

ԲԻՒՐՈՅՈՒՆԵՒՔ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

երկու տարի անձանց, 4 ամսուայ ընթացքում, հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն քան ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւմային արդիւնաբերական և կրթական գործարանական հաշուեփոխանութեան։

բ) Առևտրական թուաբանութիւն։

գ) Առևտրական նամակագրութիւն։

դ) Գեղագրութիւն և ամենագոյն ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսուում են յունվարի 15-ից հաշիւ յետոյ և պարբերաբար շարունակուում են իւրաքանչիւր 2 ՕՐ ՄԻՆԻՑ յետոյ։

Ծանրագործները թող դիմեն պրոսպ կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, Ս Ե Ր Գ Ե Ե Վ Ա Կ Ի, Սերգէեվսկի փողոց, տան Լիսիցկի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախսում է թիֆլիզի և Բաւտատանի բոլոր յարմի զրամագատանոցներում։ Գինն է 3 ռուբլի 50 կոպէկ։

Օտարազգացքաթերները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։ (15—5)

ԿԻՆԳՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒՅԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐ

		Ք. Կ.
1.	Խաչատուր Աբովեանի երկերը, (Ազգայ պատմութիւնը), Մոսկուա, գինն.	1 —
2.	Ներսէս Տէր-Յարութիւնեան, Խ. Աբովեան (կենսագրութիւն), Տ., գինն է.	— 60
3.	Ծուղտա, Սա՛ Մ. Թիֆլիզ, գինն է.	— 20
4.	Մեսրոպ արք-եպիսկոպոս Սմբատեանց, Նկարագիր Ջամախուայ թեմի, Տ.	1 25
5.	Կանֆալցիոս, Դ. Բագա., Թիֆլիզ, գինն է.	— 20
6.	Վ. Լուկեվիչ, Երկրի և երկնքի մասին 14 նկար., Թարգմ. Կ. Գ. Տփ.	— 10
7.	Գէորգ Բարխուդարեանց, Բանաստեղծութիւններ, Թիֆլիզ, գինն է.	1 —
8.	Խ. Յ. Աբովեանից, Աշակերտի յուշատետրը, Թիֆլիզ, գինն է.	— 30
9.	Ալֆօնս Դօդէ, Ընտիր պատմուածքներ, Ֆր. թ. արտ. Կ. Փափազեանց, Թիֆլ.	— 40
10.	Սա՛ Աւետիքեանց, Յափրատնի, Տփխիս, գինն է.	— 20
11.	» » Ղեկավարները, Թիֆլիզ, գինն է.	— 40
12.	Պետճ Պռոշեանց, Գեռատարեի, Բ. տպ. Տփխիս, գինն է.	1 30
13.	» , Մխքէ ապենց Աբգիւլը, Թիֆլիզ, գինն է.	— 20
14.	» , Նա, Թիֆլիզ, գինն է.	— 20
15.	» , Աբջիդէի, Թիֆլիզ, գինն է.	— 25
16.	Հ. Յովհ. վ. Յովսեան, Ընտիր Հայկազունք (պատկերազարդ) Բ. տպ. Վենետիկ, գինն է.	2 50
17.	Գր. քահ. Գրէգորեանց, Սուրբ Հաչատանի, հատ. Ա. 2որր. տպագրութիւն Մոսկուա, գինն է.	1 10
18.	Ազէքս. Ֆ. Երկայնաց, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX-րդ դարում մասն Ա. (1800—1832), մասն Բ. (1831—1842), Թիֆլիզ, գինն է.	4 —
19.	Գիլեիա, (պատկերազարդ), Պետերբուրգ, գինն է.	1 25
20.	Ծերվանդազ, Աբաէն Գիմաբեան, Թիֆլիզ, գինն է.	1 50
21.	» Հուր յոյսեր, Թիֆլիզ, գինն է.	1 —
22.	Նոր-Փոքճ—գրական և հասարակական հանդէս, Մոսկուա, գինն է.	— 75
23.	Արամեան, Գաառի օրացոյց 50 կոպ. Ճանապարհածախքով.	— 65
24.	Եջմիածնի Ծողի օրացոյց, կազմած	— 20
25.	Քասիմ, կեանքի տեսարաններ Թ. 1897 թ. գինն է.	— 50

(5—3)

Дозволено цензурою Тифлисъ, 27-го Декабря 1897 года.

Տպարան Մ. Նազարեան Մարտիրոսեանցի։

Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.